

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՓՈԽ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան երկվ ընդունեց Յունաստանի արտաքին գործոց փոխ նախարար Եանիս Մագրիտիսը, որ Հայաստան կը գտնուի մասնակցելու համար Սեյ Մոլեան Տնտեսական Համագործակցութեան արտաքին գործոց նախարարներու խորհուրդի 8րդ նիստին: Հանդիպումին, կողմերը քննարկեցին հայ-յունական յարաբերութիւններուն վերաբերող հարցեր: Մագրիտիս ըրտաւտեց Հայաստանի մէջ նկատուող բարեփոխումներու ընթացքը: Յոյն պատուիրակը երկվ նաեւ հանդիպումներ ունեցաւ Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արմէն Մաշալեանի եւ արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի հետ: Հայ-յունական յարաբերութիւններու կողմին, քննարկուեցան Եւրոպական Միութեան ընդարձակման առնչուող հարցեր: Մագրիտիս նշեց, որ Հայաստան կը գտնուի Եւրոպական Միութեան անդամակցութեան ճամբուն վրայ, յայտնեց, որ Յունաստան կրնայ օժանդակել այդ նպատակով Հայաստանի մէջ կատարուող բարեփոխումներու գործընթացին:

ՆՄՐԱԳՐԱԿԱՆ

ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ԼԻԱՐԺԵ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ

Իրաքի դէմ շրջայապերծուած պատերազմական գործողութիւնները հազիւ աւարտած՝ Միացեալ Նահանգներ սաստկացուցին Սուրիոյ դէմ իրենց կատարած սպառնալիքները:

Շրջանային առումով պատերազմական եւ սպառնական այս ընդհանուր մթնոլորտին մէջ մետասաներորդ պահուն լիբանանեան լրատուամիջոցներ հաղորդեցին, որ գործող վարչապետը Պաապտայի նախագահական պալատին մէջ իր կառավարութեան հրաժարականը կը ներկայացրնէ հանրապետութեան նախագահին:

Լիբանանեան լրատուութիւններուն հետեւողը բազմիցս յաճ էր ու կարդացած, որ Իրաքի պատերազմի աւարտին կը սպասուի դաշինքի փոփոխութիւն, սակայն այն, ինչ որ կատարուեցաւ երեքշաբթի գիշեր, յատուկ ուշադրութիւն գրաւեց ժամանակի ճշդումի արագութեամբ՝ անսպասելիութեամբ եւ յանկարծակիութեան առումներով:

Այնուհետեւ, վարչապետի եւ դաշինքի նշանակման գործընթացը տեղի ունեցաւ նկատուելի արագութեամբ մը: Առջի օր աւարտեցան նախագահին մօտ տեղի ունեցող խորհրդակցութիւնները, իսկ երէկ՝ վարչապետին հետ եղած քննարկումներն ու նոր կառավարութեան նշանակումն ու յայտարարութիւնը:

Ռազմաքաղաքական տագնապայի ընդհանուր կացութեան մէջ լիբանանեան բոլոր կողմերը վերջին շրջանին յատկապէս իրենց քաղաքական հանդիպումներուն եւ բանակցութիւններուն առնչքին վերածած էին ներլիբանանեան համախոհութեան ամրակայումը եւ միասնական շարքերով շրջանային տագնապները դիմակայելու անհրաժեշտութիւնը:

Կ'ակնկալուէր ուրեմն, որ նման պայմաններու մէջ շտապ կարգով որոշուած դաշինքի փոփոխութիւնը հիմնուած ըլլար լիբանանեան մեծաթիւ կողմերու առաջադրած այս հրամայականներուն վրայ:

Լիբանանահայ գաղութի պարագային, անկախ վերը նշուած մտահոգութիւններէն եւ առաջադրանքներէն, կար նաեւ նախորդ կառավարութեան ձեւաւորման ընթացքին արձանագրուած լիբանանահայութեան հաշուոյն հիմնական խախտումի մը սրբագրութեան անխտածգելիութեան հարցը: Պահանջ մը, որ մեր կուսակցութեան պարագային հետեւողական սօրէն մնաց իբրեւ առաջնահերթ հետապնդելի խնդիր: Արդարեւ, քաղաքական տարբեր մակարդակներու վրայ կայացած բոլոր հանդիպումներուն մեր ներկայացուցիչները մնայուն ձեւով արծարծեցին այս իմաստով կացութեան անընդունելիութիւնը եւ բոլոր հատուածներուն փոխանցեցին, որ ամէնէն արագ միջոցին կը պահանջուի լիբանանահայութեան իրաւունքի վերականգնումը:


Նոր կառավարութեան նշանակումը պուտ լիբանանեան միջհամայնքային դեկավարման համակարգի շրջագծին մէջ կ'ամբողջացնէ կառավարութեան մէջ լիբանանահայութեան վերապահուած չափաքաժինը: Հարցը, այս պարագային, նոր նշանակումը նախարարին լիբանանահայութեան եւ լիբանանահայ կեանքին հետ ունեցած առնչութեան տարողութիւնն է: Բան մը, որ լիբանանահայութեան առումով անբարարարութեան պացումով կը ստեղծէ ներազգային այն արդար համոզումը յառաջացնելով, ըստ որուն, մեր գաղութը նոր նշանակումը նախարարին միջոցով ինքզինք լիարժեք ձեւով ներկայացումը չի կար նոր կառավարութեան մէջ:

Լիբանանի քաղաքական կեանքը յատկանշող միջհամայնքային համակցութիւնը պայմանաւորուած է իւրաքանչիւր համայնքի բոլոր իրաւունքներու փոխադարձ յարգումով: Այդ իրաւունքներու պարզ յարգումը կ'արձանագրուի մեր ամրակայումը կ'իրագործուի նոյն այդ համայնքներուն պետական համապատասխան կառոյցներու եւ հաստատութիւններու մէջ առնչ լիարժեք ներկայացուցչութեան հանգամանքներով:

Շրջանային մակարդակի վրայ արձանագրուող տագնապի վարչացումներուն ներկայ մթնոլորտին մէջ նորակազմ կառավարութեան կ'ակնկալուի ներլիբանանեան միասնականութեան ամրապնդումը լիբանանեան մեր հայրենիքին դէմ ցցուող պանապան տեսակի դժուարութիւններու եւ մարտահրաւերներու շրջանցումն ու յաղթահարումը:

ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ԿԱԶՄԵՑ 30 ԸՈԳԻՆՈՑ ԻՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Երէկ երեկոյեան, Պաապտայի մէջ նախագահ Վոր. Էմիլ Լահուտ ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրին: Հանդիպումին իր մասնակի ներկայութիւնը բերաւ նաեւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի:



Հարիրի եւ Պըրրի

Ի շ ի ա ն ո թ ե ա ն երեք պետերուն միջեւ ժողովը աւարտեցաւ ժամը 7:30ին եւ նախարարաց խորհուրդի ընդհանուր քարտուղար Սուէլի Պաուրի յայտարարեց կառավարութեան նոր կազմը, որ կ'ընդգրկէ 30 նախարարներ, որոնց 11ը նորն են:

Ստորեւ կու տանք, վարչապետ Հարիրիի կազմած նոր կառավարութեան անդամներուն անուանացանկը, իրենց համապատասխան պաշտօններով:

Իսամ Ֆարէս՝ փոխ վարչապետ (յոյն ուղղափառ), Պահիժ Թապպարա՝ արդարութեան նախարար (սիւննի), Մարուան Համատէ՝ տնտեսութեան եւ առեւտուրի

նախարար (տիւրքի), Ասատ Հարտան՝ աշխատանքի նախարար (յոյն ուղղափառ), Ֆարէս Պուէյլ՝ կենսոլորտի նախարար (մարոկկո), Թալալ Արսլան՝ պետական նախարար (տիւրքի), Սլէյման Ֆրէմի՝ առողջապահութեան նախարար (մարոկկո), Ասատ Տիպա՝ ընկերային հարցերու պետական նախարար (շիի), Միշէլ Սամահա՝ տեղեկատուութեան նախարար (յոյն կաթողիկէ), Ֆուատ Սիւնիորա՝ ելեւմուտքի նախարար (սիւննի), Ապտէլ Ռահիմ Մըրատ՝ պետական նախարար (սիւննի), Ժան Օպէյտ՝ արտաքին գործոց եւ


արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար (մարոկկո), Այյուս Հըմայլէ՝ ուժայնութիւն եւ ջուրի հարցերու նախարար (շիի), Միշէլ Սուսա՝ պետական նախարար (յոյն կաթողիկէ), Քարամ Քարամ՝ պետական նախարար (յոյն ուղղափառ), Մոհամէտ Նեմիպ Միքաթի՝ հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար (սիւննի), Սեպուհ Յովանեան՝ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար (հայ առաքելական), Խալիլ Հըրուուի՝ պետական նախարար (մարոկկո),

Շար.ը՝ էջ 10

ՍՄՏՏԱՄ ՀԻՄՆԵՆԻ ԽՈՐԹ ԵՂՔԱՅԻՐԸ ԶԵՐԲԱՎԱԼՈՒՄԸ

ՊԱՂՏԱՏԻ ԿԱՌԱՎԱՐԻՉԻՆ ԳԾՈՎ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԻՐԱՔԻ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԶԱԿԱՏԻՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐՈՒՆ ՄԻՋԵԻ

ՄԱԿ կոչ կ'ուղղէ բաւարար ֆոնտեր հաստատելու եւ եկամուտ ապահովելու՝ Իրաքի վերաշինութեան աշխատանքը յառաջխաղացելու մէջ դնելու համար: Մինչ այդ, Միացեալ Նահանգներու նախագահ Ճորժ Պուշ կը յայտարարէր, թէ ՄԱԿ պէտք է ընջէ Իրաքի դէմ հաստատուած պատժամիջոցները: Իսկ Իրաքի մէջ ամերիկացի պաշտօնատարներ կը յայտարարէին ձեռքարկութիւնը Սատտամ Հիւսէյնի խորթ եղբայր՝ Պարզան Թիբրիթի: Պատերազմին վերջին օրերուն, ամերիկեան աղբիւրները հաղորդած էին, թէ Թիբրիթի սպաննուած էր ուժեղութեամբ մը ընթացքին:



Պարզան Թիբրիթի

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան, որ Աթէնք կը գտնուէր Եւրոպական Միութեան վեհաժողովի մը համար, ըսաւ, որ ՄԱԿի պէտք է տրամադրուին ֆոնտեր, որ պէտք է կարենայ դերակատարութիւն ունենայ Իրաքի մէջ: Անան դիտել տուաւ նաեւ, որ մարդասիրականէն անկախ ՄԱԿի վստահութիւնը որեւէ դերակատարութիւն պէտք է հաշտ ընթանայ ՄԱԿի ուստին հետ, ինչպէս նաեւ՝ եկամուտի հաստատ ու մնայուն աղբիւրներ պէտք է ունենայ:

Գետնի վրայ, Իրաքի մէջ կացութիւնը կը մնայ լարուած, հակառակ այն որ կողմակուսի արարքները սկսած են նուազել: Կարգ մը շրջաններու մէջ պարբերաբար բախումներ կ'արձանագրուին ամերիկեան ուժերուն եւ Սատտամի հաստատարիմ գինեակներու միջեւ: Յատկապէս հիւսիսային շրջանի քաղաքներէն Մուսուլի մէջ կը թուի թէ պատերազմը տակաւին չէ աւարտած: Ամերիկեան ուժերուն բանբերը՝ զօր. Վինսենթ Պրուքս ըսաւ, որ անցնող քանի մը օրերուն Մուսուլի մէջ սպաննուած է քանի մը հոգի, երբ ամերիկեան ուժերը հակադարձած են սպառնալիքներու: Պրուքս աւելցուց, որ իրաքեան ոստիկանութիւնը, որ սկսած է վերստանձնել իր դերը քաղաքին մէջ, ամերիկեան ուժերուն հետ կը գործակցի՝ կարգն ու կանոնը վերահաստատելու համար: Ականատեսները սակայն կ'ըսեն, որ երեքշաբթի եւ Չորեքշաբթի օր 15 գոհ եւ 28 վիրաւոր ինկած է Մուսուլի մէջ: Պրուքս չհաստատեց այս թիւը: Ան պարզապէս ըսաւ, որ եօթը հոգի սպաննուած է ամերիկեան ուժերուն կողմէ, որոնք կրակ բացած էին խուճկար խուճանի մը վրայ: Պրուքս աւելցուց, որ ամերիկեան ուժերը իրաւունք ունին ինքնապաշտպանութեան:

Իրաքի դէմ պատերազմող դաշնակից ուժերուն հրամանատար զօր. Թոմի Ֆրէնքս, որ Չորեքշաբթի օր Պաղատան այցելած էր, երէկ Քուէյթի մէջ յայտարարեց, որ կողմակուսի եւ անօրէնութեան երեւոյթները սկսած են մեղմանալ: Ֆրէնքս Պաղատան մէջ այցելած էր Սատտամի պալատներէն մէկը, որ ամերիկեան զինուորական կեդրոնի վերածուած է: Կարգ մը աղբիւրներու համաձայն, Ֆրէնքս Պաղատան պիտի հաստատուի՝ հետեւելու համար աշխատանքներուն: Ֆրէնքս ըսաւ նաեւ, որ գոհ է ամերիկեան ուժերուն ցարդ տարած աշխատանքէն:

Շար.ը՝ էջ 2

Հ. Յ. Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԸՆԿ. ԱՐՄԷՆ ՌՈՒՍՏԱՄԵԱՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ ընկ. Արմէն Ռուստամեան, որ աշխատանքային այցելութեամբ մը Յունաստան կը գտնուի, Ապրիլ 14ին հանդիպումներ ունեցած է յունական քաղաքական եւ խորհրդարանական շրջանակներու հետ:

Ռուստամեանի եւ Յունաստանի իշխող ՓԱՍՕԲ կուսակցութեան պատգամաւոր Պանկայոսի միջեւ երկար հանդիպման ընթացքին քննարկուած են շրջանային համագործակցութեան եւ ներկայ իրավիճակին առնչուող հարցեր: Անոնք անդրադարձած են Եւրոպական Միութեան վերաբերող խնդիրներու: Յունաստան վեցամսեայ հերթափոխութեան դրութեամբ ներկայ նախագահն է Եւրոպական Միութեան: Պանկայոս ներկայացնելով Եւրոպական Միութեան ընդլայնման գործընթացը յատկապէս շեշտած է Կիպրոսի անդամակցութեան հարցը, միաժամանակ ընդգծելով Թուրքիոյ ոչ կառուցողական մօտեցումը այս հարցին գծով:

Պանկայոս հետաքրքրուած է նաեւ Հայաստանի նախագահական վերջին եւ խորհրդարանական յառաջիկայ ընտրութիւններու ընթացքով, միաժամանակ՝ Հ. Յ. Դ.ի առաջադրանքներով: Ան յոյս յայտնած է, թէ Հ. Յ. Դ. կարելի դեր կ'ունենայ Հայաստանի յառաջիկայ խորհրդարանին մէջ՝ իբրեւ բարեփոխումներու իրականացման եւ եւրոպական արժեքներու տարածման մէջ քաղաքական հետեւողական ուժ:

Շար.ը՝ էջ 9

ԲՈՒԼԻՆ ՓԱՌԸԼ ԿՐԱՅ ՍՈՒՐԻԱ ԱՅՑԵԼԵԼ՝ ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԻՋԵԻ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ՄԵՂՄԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Դամասկոս երկվ յայտնած է, թէ պիտի ողջունէ Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը Սուրիա այցելութիւնը՝ հակառակ Ուաշինգթոնի կողմէ Դամասկոսի դէմ վերջերս արտայայտուած բազմաթիւ ամբաստանութիւններուն:

Ուաշինգթոնի մէջ արտաքին գործոց նախարարութեան մէկ բանբերը Չորեքշաբթի գիշեր յայտնած է, թէ Փաուլը կրնայ Սուրիա այցելել երկու երկիրներուն միջեւ լարուածութիւնը մեղմացնելու նպատակով:

Մինչ այդ, Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարիք երկվ Գահիթի մէջ շեշտած է, որ Սուրիա իր գնառարկան սարքերուն կամ իր հողամասերուն քննութիւնը պիտի չարտօնէ՝ ցոյց տալու համար, որ քիմիական զենքեր չունին:

Դամասկոս «միայն մասնակից պիտի դառնայ իր արաք եղբայրներուն եւ աշխարհի երկիրներուն հետ՝ Միջին Արեւելքը այլակերպելու աշխատանքին, շրջանը վերածելու համար իրաւական քանցումը գէնքերէ զուրկ գօտիի մը», յայտնած է ան նախագահ Հիւսէյն Մուպարաքի հետ տեսակցութեան մը ետք:

Սուրիա Չորեքշաբթի օր շեշտած էր, թէ իրաքեան տապալած վարչակարգին ղեկավարները պիտի չփորձեն ցոյցիս իր հողամասերը մտնել, հերքելով անի ամերիկեան այն ամբաստանութիւնները:

Շար.ը՝ էջ 9

ՀԱՅԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 88ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Տեղի կ'ունենայ Հիգզաբքի, 24 Ապրիլ 2003ին, կեսօրուան ժամը 12:00ին, «Յակոբ Տըր Մելքոնեան» բառերարարին մէջ:

Շար.ը՝ էջ 2

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԽՍՏԻ ԳԱՏԱՊԱՐՏԵՅ ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆՆԻ ԴԵՄ ԿԱՏԱՐՈՒՈՂ ՄՊԱՌՆԱԼԻՔԵՐԸ



Լահուտ եւ գոր. Սլէյման

Նախագահ գոր. Էմիլ Լահուտ երկէ շեշտեց, որ ոչ մէկը կրնայ մեղադրել Լիբանանն ու Սուրիան իրաքցի ժողովուրդին զօրավիզ կանգնելու իրենց կեցումաձեւին համար:

Նախագահ Լահուտ երկէ խօսքի դարադարպեց Լիբանանի եւ Սուրիոյ դէմ կապարտող սոցալալիստները, յաբկապէս անոնք, որոնք վերջին շրջանին թիրախ դարձուցին Սուրիան: Ան շեշտեց, որ Լիբանանն ու Սուրիան երբեք չեն զոյար, որ նախընթաց են իրաքեան փազնադին խաղաղ լուծումը ՄԱԿի Ադախովութեան խորհուրդին ճամբով:

Նախագահ Լահուտ այս յայտարարութիւնները կապարտեց բանակի հրամանատարներու յայտարարութեան մը ներկայութեան, գոր կը գլխատրէր բանակի ընդհանուր հրամանատար գոր. Միշէլ Սլէյման:

Նախագահ Լահուտ շեշտեց, որ Բարաք Օբամայի շահերուն ծառայող զինեց փորձի առջեւ Լիբանան բնա ոչիպի չգիշի իր իրաւունքներէն եւ միշտ ոչիպի շարունակէ մերժել Լիբանանի մէջ դադեալիցիներու բնակեցումը, դախանցելով անոնց փունդարձի իրաւունքը:

ՊԱՂՏԱՏԻ ԿԱՌԱՎԱՐԻԶԻՆ ԳԾՈՎ ՏԱՐԱԿԱՐԾ ՈՒԹԻՒՆՆԵՐ...

Ծարուակուած Ա. Էջէն

ՊԱՂՏԱՏԻ ԿԱՌԱՎԱՐԻԶԻՆ ԳԾՈՎ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինչ իրաքի ընդգրկմադիր ճակատը կը յայտարարէր, որ Պաղտատի բնակիչները կառավարիչ ընտրած են Մոհամէտ Մոհամէտը: Չուպէյտի, ամբերիկեան ուժերը կը պնդէին, թէ որեւէ նշանակում չէ կատարուած: Հակառակ այս հերքումին, սակայն, ենթադրուեալ կառավարիչը երէկ խոստացաւ, թէ ամբերիկեան ուժերուն կողմէ գրաւուած իրաք պիտի ունենայ իրաքցիներուն կողմէ ընտրուած կառավարութիւնն մը եւ թէ անիկա պիտի դառնայ «ժողովրդավարութեան տիպար»:

Չուպէյտի, որ ընդգրկմադիր ճակատի ղեկավար Ահմէտ Շալապի մօտիկ անձերէն կը նկատուի, երբեք չի օր ըսած էր, թէ Պաղտատի փոխանցման հանգրուանի իշխանութիւնը ստանձնելու պարտականութիւնը իրեն վստահուած է: Գեղարտութեան պետերու եւ կրօնական անձնաւորութիւններու կողմէ: Ան վստահեցուցած էր նաեւ, թէ այս նշանակումը կը վայելէ ամբերիկեան հաւանութիւնը: Չուպէյտի երէկ շեշտեց, որ Պաղտատի կարգ մը թաղամասերուն մէջ մեծ թիւով թղթակիցներու եւ նկարիչներու ընկերակցութեամբ, Չուպէյտի, 15 տարեկան է, ի վերջոյ կը գտնուի: Ան մահուան դատապարտուած էր Սատտամի իշխանութեան կողմէ: Միւս կողմէ, Պաղտատ գտնուող ամբերիկեան ուժերուն բաները, որ կառավարիչ նշանակուած է: Բաները ըսաւ, որ ամբերիկեան կառավարութիւնը Պաղտատի ոչ կառավարիչ, ո՛չ ալ քաղաքացի նշանակուած է: Մամլոյ ասուխտին ընթացքին Չուպէյտի յայտնած էր նաեւ, թէ ամբերիկեան ուժերը օտարազաւ կած են գտնելու համար աւելի քան 25 քաղաքական բանտարկեալներ: Ան ըսաւ, որ բանտարկեալները գտնուած են ստորերկրային գնտանքներու եւ խոցերու մէջ:

Էնդգրկմադիր ճակատի ղեկավար Ահմէտ Շալապի, որ 1957էն ի վեր արտերի մէջ կ'ապրէր, Չուպէյտիի գիշեր Պաղտատ վերադարձաւ, իրեն նստավայր ունենալով Սատտամի տղուն Ուտայի անձնակազմ «Որտորութեան Ակումբը»: Զինեալ թիկնապահներ կը հսկեն կեդրոնին շուրջ, ուր Սատտամի նկարներուն փոխարէն բարձրացած են 57 տարեկան Շալապիի նկարները: Շալապի, որ չի մեծահարուստ գործարար մըն է, կը նկատուի սիրելի Միացեալ Նահանգներու Հանրապետական կուսակցութեան եւ արտաքին գործոց նախարարութեան: Սակայն ֆենթազիստ ու այլ բաժանմունքներ վերապահութիւններ ունին անոր հանդէպ:

Ընդգրկմադիր ճակատի ղեկավար Ահմէտ Շալապի, որ 1957էն ի վեր արտերի մէջ կ'ապրէր, Չուպէյտիի գիշեր Պաղտատ վերադարձաւ, իրեն նստավայր ունենալով Սատտամի տղուն Ուտայի անձնակազմ «Որտորութեան Ակումբը»: Զինեալ թիկնապահներ կը հսկեն կեդրոնին շուրջ, ուր Սատտամի նկարներուն փոխարէն բարձրացած են 57 տարեկան Շալապիի նկարները: Շալապի, որ չի մեծահարուստ գործարար մըն է, կը նկատուի սիրելի Միացեալ Նահանգներու Հանրապետական կուսակցութեան եւ արտաքին գործոց նախարարութեան: Սակայն ֆենթազիստ ու այլ բաժանմունքներ վերապահութիւններ ունին անոր հանդէպ:

ԳԱՂՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՊԱՏՄԱՍԻՋՈՅՆԵՐԸ ԶՆՋԵԼՈՒ ԿՈՉԻՆ

Իրաքի դէմ հաստատուած ՄԱԿի պատժամիջոցները ջնջելու ամբերիկեան կողմը գաղջ ընդունեց:

ԱՐԱԳ ՈՒՐԲԱԹ ԿԱՐԳ ԹԱՂԱՄԱՆ Ա. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Աւագ Ուրբաթ, 18 Ապրիլ 2003ին, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Ա. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ, մեր Տիրոջ՝ Յիսուս Բրիտոսի թաղման կարգի յիշատակի արարողութեան պիտի նախագահէ եւ քարոզէ

ԳԵՐՁ. Տ. ՇԱԿԵ Ծ. ՎՐԴ. ՓԱՆՈՍԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու եւ մասնակից դառնալու օրուան խորհուրդին:

Ա. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՇԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մարգարէ հասարակութեան ծանօթ է, որ այս Կիրակի յետմիջօրէին, Լիբանանի ֆոթօպոլիստիկ անուանուած Բ. դասակարգի վերջին հանգրուանի մրցումներուն Մ.Ս.Ս. պիտի մրցի Մ.Ս.Ս.ի դէմ: Ինչպէս միշտ, այս տարի եւս հայկական խումբերու հանդիպումը համակիրներու մօտ ստեղծած է լայն հետաքրքրութիւն. վստահ ենք, որ այս Կիրակի օրուան մրցումը չի տարբեր իր նախորդներէն: Անկախ մրցումի արդիւնքէն, հայկական զոյգ խումբերու պատասխանատուները իրենց համակիրներէն կը պահանջեն խումբերան ուղղուիլ մարզադաշտ՝ մարզավայել եւ օրինակելի ոճով քաջալեր հանդիսանալով իրենց խումբերուն:

Հայկական խումբերու հանդիպումը ֆոթօպոլիստիկ մրցումէն վեր յանձնարարական մըն է արտայայտելու լիբանանահայութեան վճռակամութիւնը եւ կենսունակութիւնը, ապացուցելու, թէ անոնց արժանի տեղը եւ դիրքը կը գտնուի Ա. դասակարգին մէջ: Շտեմբար, այս Կիրակի օր բոլորս ուղղուիք դէպի դաշտ եւ քաջալերենք հայկական խումբերը:

Մ.Ս.Ս.Ի ՖՈՒԹՊՈԼԻ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԸ Մ.Ս.Ս.Ի ՖՈՒԹՊՈԼԻ ԴԻՒՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԹԱՄԱՍԱՐԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՄ, ԿԵՐԱՊՈՒՄ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ, Երեքշաբթի, 22 Ապրիլ 2003, Երեկոյեան ժամը 6:00էն 8:30 Արթիւր Մաթոսեան արուեստի կեդրոն - Մուկար շէք ՀԱՅԿԱԶԵԱՆ ԸՄՍԱՍԱՐԱՆ - Զանթարի Յուցահանդէսը կը շարունակուի մինչեւ 5 Մայիս 2003:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՍՐԲՈՅ ՎԱՐԳԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Տեառն մերոյ եւ Փրկչին՝ Յիսուս Բրիտոսի մատուցեան եւ շարչարանաց (Խաւարման Գիշեր) առիթով, Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ մէջ այսօր Շնչազարթի, 17 Ապրիլ 2003ին, երեկոյեան ժամը 7:30էն սկսեալ արարողութեան պիտի հանդիսակցեն եւ քարոզէ:

ԳԵՐՁ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

Բարեչան Առաջնորդ Լիբանանի հայոց

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ մեր ժողովուրդը ներկայ գտնուելու արարողութեան, ունկնդրելու սրբազան հօր պատգամը եւ հաղորդուելու օրուան խորհմաստ խորհուրդով:

ԹԱՂԱՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ա. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ս. ՉԱՍԿՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՊԱՏԱՐԱԿ Ա. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Տեառն մերոյ Յիսուսի Բրիտոսի Հրաշափառ Յարութեան տօնին առիթով Կիրակի, 20 Ապրիլ 2003ին Սուրբ Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ Սուրբ եւ անմահ պատարագ: Պիտի պատարագէ եւ քարոզէ:

ԳԵՐՁ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

(Առաջնորդ Լիբանանի Հայոց)

Սիրով կը հրաւիրուի մեր սիրելի ժողովուրդը ներկայ գտնուելու Սուրբ եւ անմահ պատարագին, վերանորոգուելու համար Սուրբ Յարութեան խորհուրդով եւ լսելու առաջնորդ սրբազան հօր պատգամը:

Ծանօթ.- Առաջնորդ Հայր Սուրբ Չատուրան Հնորհաւորութիւններ պիտի ընդունի պատարագէն ետք մինչեւ ժամը 1:00 եւ կէսօրէ ետք ժամը 4:00էն 6:00, քաղաքի Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ:

ԹԱՂԱՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ա. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Լուծելու ունեցաւ: Հակադարձ ուժերուն ընդհանրապէս խանդավառ չէին:

Մոսկուա, որ պատերազմին դէմ արտայայտուած էր, կը մերժէ պատժամիջոցները ջնջելու: Արտաքին գործոց նախարարութեան մէկ պաշտօնատարը ըսաւ, որ Պաղտատի մէջ վարչակարգի փոփոխութիւնը նախապայման չէ պատժամիջոցներու ջնջումին: Պաղտատատարը շեշտեց, որ այսպիսի որոշումի մը տէրը ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդն է: Ան աւելցուց, որ պատժամիջոցներու ջնջումը Ապահովութեան Խորհուրդի մէկ որոշումով պայմանաւորուած է Իրաքի ապագինուումով, ոչ թէ իշխանութեան փոփոխութեամբ: Իսկ ապագինումը ՄԱԿի քննիչներու կողմէ միայն կրնայ հաստատուիլ, աւելցուց պաշտօնատարը:

Ֆրանսայի նախագահ Ժակ Շիրաք իր կարգին ըսաւ, որ ՄԱԿ պէտք է որոշէ, թէ Իրաքի պատժամիջոցները երբ եւ ինչպէս պէտք է ջնջուին: Շիրաք վերստին շեշտեց, որ յետպատերազմեան Իրաքի մէջ մեծ դեր պէտք է ունենայ ՄԱԿ:

Եւրոպական Միութեան ընթացիկ նստաշրջանի նախագահ Յոնաս Գալուստարեան, որ ամպարկոն պէտք է վերցուի, երբ Իրաքի մէջ բնականոն ընթացք մը հաստատուի:

Միւս կողմէ, Գերմանիոյ մէջ ամբերիկացի դէպքերը ըսաւ, որ ՕՊԱՆ ՄԱԿէն աւելի յարմար է ստանձնելու համար Իրաքի մէջ խաղաղարար ուժերը:

● ԱՐԱՐԱԿԱՆ Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա ըսաւ, որ Իրաք պէտք է կառավարուի ու ղեկավարուի իրաքցիներուն եւ ոչ՝ Միացեալ Նահանգներուն կողմէ:

● ՅՆՍՈՎԻԲԻ զլիստեր քննիչ Հանս Պլիքս կը պահանջէ Իրաք վերադարձը ՄԱԿի քննիչներուն, ստուգելու համար, թէ հաւաքական քանդումի գէնքեր պատրաստուելու ծրագրերը ունէ՞ր Պաղտատ:

● ՅՆՍՈՎԻԲԻ իսլամական եղբայրներ կազմակերպութիւնը կը պահանջէ, որ իսլամական օրէնքը հաստատուի արաբական աշխարհին մէջ՝ կանխարգիւցելու համար շրջանին քայքայումը Իրաքի պատերազմին պատճառով:

● ՅՆՍՈՎԻԲԻ վեց ուսանողներ Պաղտատի մէջ ձերբակալուած են ամբերիկեան ուժերուն կողմէ, հաղորդեց «Տուսթուր» օրաթերթը, որ սակայն մանրամասնութիւններ չի փոխանցեց ձերբակալման պատճառներուն մասին:

● ԹՈՒՐԻՒՆԻՅ ապահովութեան ուժերը երէկ ձերբակալեցին 26 ուսանողներ, որոնք կը բողոքէին Իրաքի պատերազմին դէմ: Ցուցարարներուն եւ ոստիկանութեան միջեւ բարեւոյտ տեղի ունեցած էր:

ԹՐԲԱՎԱՅԵԼ ՅԱՏՈՒԿ ՊՈՌՏԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՌԱՀՎԻՐԱՅ ԿԻԼԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԵԿ ՉԱՐՈՏՈՒՔԸ

Սթէնքի մէջ գումարուող Եւրոպական Միութեան վեհաժողովին յաջորդող խորհրդաժողովին ընթացքին խօսք առնելով, Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլ երէկ թրքավայել յատուկ պրոտախօսութեամբ յայտարարեց հետեւեալը:

«Թուրքիա վճռած է գործօն մասնակցութիւն բերել աւելի ընդարձակուած Եւրոպայի մը մէջ ժողովրդավարութիւն, կախունութիւն, բարգաւաճում եւ ապահովութիւն քաջալերելու ճիգերուն, ինչպէս նաեւ Թուրքիա կամուրջ մը պիտի դառնայ, նկատի առած անոր յատուկ յարաբերութիւնները՝ Միութեան արեւելեան եւ հարաւային բազմաթիւ դրացիներու հետ»:

Կիլի այս նոր բայց ոչ վարմանալի հերթական ճարտուրքը, որուն վարժուած ենք այլեւս, երկու արարով է:

Առաջինը՝ Եւրոպայի ժողովրդավարութեան, կայունութեան, բարգաւաճման եւ ապահովութեան իմաստով Անգարայի չափերու «յանձնառութիւն»ն է, որ պարզապէս ծիծաղելի է: Իմացական ամէնէն համեմատ կարողութիւնն ունեցող մարդն անգամ վստահաբար պիտի գայթակղի ի լուր այս պրոտախօսութեան եւ հարց պիտի տայ, թէ Թուրքիա արդէոք ինք իր երկրին մէջ այդ պայմանները լրացուցած է, որ հիմա մտահոգ է այդ ուղղութեամբ Եւրոպայի ճիգերով: Կիլ ո՞ր ժողովրդավարութեան մասին կը խօսի, երբ իր ուսերուն ունի այնպիսի բեռներ, որոնց տակ կըստ է ան եւ որոնք կը կոչուին Հայկական Յեղասպանութիւն, Հայ Դատ, քրտական եւ կիպրական հարցեր... Իսկ ինչ կը վերաբերի բարգաւաճման, ապա բարար է, որ ան աչք մը նետէ Պոլիսէն դուրս ապրող, Անատոլիի խորքերը քար շուրջ իր ժողովուրդին ընկերային ու տնտեսական իրավիճակին, խայելու եւ անգամ մը ալ այս իմաստով շարտաչափուելու համար: Բայց վստահ եղէք, որ թուրք չունի խայելու այդ զգացումը: Նորոգելու ի ծնէ ամբարտաւան է, անտառ ու անբան: Այս բոլորէն ետք տակաւին չենք խօսիր այն մասին, թէ Կիլ ինքն իրեն ինչ ու փողկապ կը կապէ Եւրոպայով մտահոգուելու. արդէո՞ք արդէն ան ինքզինք Եւրոպական Միութեան անդամ կը նկատէ... Եթէ այդպէս է, ապա կը նշանակէ, թէ թուրք ղեկավարութիւնը եւս սկսած է երապներով օրօրուիլ, ինչպէս անոր ժողովուրդը, ինչ որ ցաւալի ու մտահոգի է անշուշտ Եւրոպայի հաշուոյն... Այս գծով կայ նաեւ այլ հարց մը. Եւրոպա արդէո՞ք կը տառապի ժողովրդավարութեան, կայունութեան, բարգաւաճման եւ ապահովական տազնապներով, որ Թուրքիա անոր գրկաբաց օգնութեան կը փութայ...

Երկրորդ արարը, որ աւելի վստահաւոր է, Թուրքիոյ դիւանագիտութեան պետին հնարած կամուրջն է Եւրոպայի արեւելեան եւ հարաւային իր «բազմաթիւ դրացիներուն» հաշուոյն: Բայց ո՞ր դրացիներն են: Ամբողջ պատմութեան ընթացքին ո՞վ կրցած է Թուրքիան իբրեւ բառին բուն առումով դրացի ընդունիլ: Կարելի՞ է անոր դրացնութեան կամ բարեկամութեան վստահիլ: Անգարա իր անվստահելի ըլլալու նորագոյն փաստը տակաւին տուաւ վերջերս, իրաքեան հարցով, երբ ոչ միայն իր սակական դրացին, այլեւ իր կնքահայրը՝ Ուաշինկթօնի փորձեց «ծախել», ինչպէս պիտի ուզէինք ըսել ուսիկ լեզուով:

Արդ, ի՞նչ յոխորտանք է այս Կիլի կողմէ: Ո՞ր կամուրջին, ո՞ր դրացիներուն մասին կը խօսի ան: Ժամանակն է, որ թուրք ղեկավարութիւնը վզատանայ, աւելի ճիշդ՝ արթնայ իր թմբիկէն, որովհետեւ քաանկերորդ դարն ենք եւ ոչ՝ տասնվեցերորդ, երբ Կիլի օսմանցի նախահայրերը իբրեւ մեծ պետութիւն կրնային խօսք ունենալ իրերու դրութեան մէջ, բայց այսօր տարբեր է կացութիւնը, փոխուած են ժամանակները, հետեւաբար Անգարայի կը մնայ ոտքերը իր վերմակէն դուրս չհանել, չձաքոտել ու փոխանակ ինքզինքը երեւակայածին կամուրջներու դերակատար նկատելու կամ ժողովրդավարութեան օրրան Եւրոպայի ժողովրդավարութեան ու բարգաւաճման ծիծաղելի ու անհեթեթ դասեր տալու, թող մտածէ ինչպէ՞ս ձերբապատիլ վերջ յիշուած իր ուսերուն ծանր կշռող բեռներէն, այլապէս այս պիտի կքի անոնց տակ, ամէն օր քիչ մը աւելի...

ԿՈՒՋՈՒԻՆ

● Զարտուղարուի մը՝ համակարգիչ գիտնալը պայման: ● Ոսկերիչ (ստեյթը) վարպետներ: Դիմել հեռ. 01 - 242549: ՀՐԱԶ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ՄԸ՝ ՏՈՔԹ. ՍԱՐԳԻՍ ԵՐԷՅԵԱՆԻ ԿՈՂՄԷ

Հիստալյի Ամերիկայի մեջ ծանօթ աճուն մըն է տոքթ. Սարգիս Երեյան, որուն նորագոյն իրագործումը իր վրայ հրաւիրած է բժշկական աշխարհի լուսարձակները:

Մեր պաշտօնակից «Հորիզոն» կարճ, բայց շահեկան հարցազրոյցի մը ընդմէջէն հետաքրքրական տեղեկութիւններ կը փոխանցէ ընթերցողին, որ վստահաբար ինքզինքը հպարտ պիտի զգայ յայտարարելու հարցազրոյցը՝ որոշ յայտարարութիւնով:

ՀԱՐՑՈՒՄ. - Տոքթ.

Երեյան, մեր ընթերցողներուն կրնա՞ք բացատրել ընդհանուր գիծերու մէջ, քե՞ ի՞նչ է ձեր վերջին բժշկական գիտքը: **ՊԱՍՏԱՆԱՆ. -** Իրականութեան մէջ վիրաբուժական բնագաւառին մէջ նորարարութիւն մըն է, որ կը վերաբերի թուլութիւն (hemorrhoid) վիրաբուժական գործողութիւններուն: Բացատրեմ. գործողութիւնը, որուն կ'ենթարկուի թուլութիւն (մայրաբեր) տառապող հիւանդը, նախ կը կատարուի բուժարար (sedative): Բժշկական անունով այս վիրաբուժութիւնը կը կոչուի Closed Bloodless Hemorrhoidectomy:

Ի՞նչ տուն մեկնել, որովհետեւ վիրաբուժութեան ընթացքին իրեն չի ներարկուի զօրաւոր ամոքար (sedative): Բժշկական անունով այս վիրաբուժութիւնը կը կոչուի Closed Bloodless Hemorrhoidectomy:

Հ. - Փորձարկումներու ենթարկած էք ձեր հետաքրքիր:

Պ. - Այո՛: Վիրաբուժութիւնը փորձուած է 2000 անհատներու վրայ, եւ բոլոր պարագաներն ալ յաջող ընթացած են, բացի չնչին բարդութիւններէ:

Հ. - Ձեր գիտե՞ց առաջ փորձուած է ի՞նչ թուլութիւններով:

Պ. - Միջազգային «Johnson & Johnson» ընկերութիւնը վերջին տարիներուն հնարած էր թուլութիւն դարմանումի թուլութիւն:

գործիք մը, որ կը կոչուի PPH: Այս գործիքը բաւական բարդ է գործածելը եւ երբեմն նոյնիսկ փորձարկման ժամանակ կըրնայ մորթին վնասել, բորբոքումներ յարուցանել կամ նոյնիսկ մահացու դառնալ: Մինչ մեր պարագային, ինչպէս վերը բացատրեցի, մէկ ժամանակ վիրաբուժութեան էտք, բացի ժամանակաւոր (քանի մը ժամ) ցաւէն, հիւանդը ոչ մէկ բարդութեան ենթակայ տակաւին, որ PPH-ը կ'օգտագործուի մահացու չէ Միացեալ Նահանգներու մէջ:

Հ. - Այս գիտքը պատկան մարմիններու մօտ արձանագրուած է:

Պ. - Արձանագրուած է Society of American Gastrointestinal Endoscopic Surgeons-ի մօտ, որ յայտնի բժշկական հետազոտական ընկերակցութիւնն է:

Հ. - Յաճախ ձեր օրագրերը ի՞նչ են:

Պ. - Այլ ծրագրերը եւ գիտական նորարարութիւնները վրայ աշխատանք կը տանիմ, որոնք անշուշտ ժամանակ կը կարօտին: Կըրնամ ըսել, որ ոչ նուազ քան 15 ծրագրեր կան, որոնք բոլորն ալ վիրաբուժական գործիքներու մասին են: Նոր գիտք մը ունիմ ժողովածքի (մազի տոպրակ) առնչութեամբ,

որ ժողովածքէն յառաջացած բորբոքումներու առաջը առնելու համար նոր ձեւ մը գտած եմ:

Իմ կողմէն հնարուած գործիքներէն մէկը յղած եմ տիեզերագնացութեան ամերիկեան NASA հաստատութեան: Այս նոր գիտքին նպատակն է անջրպետին մէջ, ծագած անպատեհութեան մը պարագային, գործողութիւն կատարել ձգտող կանոններէն զերծ միջավայրի մէջ: Այս գործիքը միաժամանակ հինգ պարտականութիւններ կը կատարէ եւ կը կոչուի Yeretsian Umbrella: NASA-ն ընդունեց ծրագիրս, սակայն ներկայիս անոր վրայ աշխատանքներու ձեռնարկումը ըստ պատման վիճակի մէջ է:

Անշուշտ հեռակայ նպատակներէն մէկը կը հանդիսանայ այն, որ գիտերու բերելագուտն է ետք, այս գիտարեւտը տանիլ Հայաստան եւ հոն նախաձեռնել արտադրութեան աշխատանքը: Գիտական աշխատանքներու կողքին, երբեք չեմ մոռնար Հայրենիքն ու Արցախը, որոնց համար իմ զօրակցութիւնս միշտ կատարած եմ գործնական գետնի վրայ:

ՄԻՐՎԱՐԳ ԳԱՐԱՄԱՆՈՒԿԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՆ ԽՏԱՍԱԼԻԿԸ



Վերջերս հրատարակուած է պոլսահայ ակադեմիկոս երաժշտահայ Միրվարդ Գարամանուկի մանկական երգերուն խոսաստիկը, որ կը բովանդակէ երեսուներեք երգ:

Անցնող տարուան ընթացքին երաժշտասէրներ ողջունեցին անոր անդրանիկ խոսաստիկին հրատարակումը, ուր տեղ գտած էին երաժշտահային խմբերգային ստեղծագործական վաստակին երեւելի էջերը: Երեւանի մէջ սենեկային երգչախումբի եւ նուագախումբի կողմէ, զոր կը ղեկավարէր Երեւանի կոմիտասի անուան բարձրագոյն երաժշտանոցի խմբերգային արուեստի առաջատար ղեկավարներէն Յովհաննէս Միրզոյեան:

Իրեն անմիջական շարունակութիւն նախորդ խոսաստիկին՝ մանկական երկերուն հրատարակումը կը զայն առաջնորդէր ներգործում մը ունենալու արեւմտահայ արդէն իսկ սակաւթիւ մանկապատանեկան երաժշտութեան բնագաւառին մէջ՝ միաժամանակ այս անակախութեան ալ ամբողջացնելով երաժշտահայ Միրվարդ Գարամանուկի ստեղծագործական բազմահարուստ դիմանկարը:

Նախորդին նման, այս անգամ եւս ձայնագրման եւ մշակման վայրը եղած է Երեւանը: Ժողովրդական գործիքներու շուկայ, տուտուկի, բլուկի, քանոնի, քամանչայի եւ հարուստային նուագարաններու հնարամիտ օգտագործմամբ երգերը դաշնակորած եւ «գործիքաւորած» է հայրենի երաժշտահայ Ռուբէն Ալթունեան: Իսկ Սայաթ Նովայի անուան երաժշտահայ դպրոցի մանկական երգչախումբը երգերը կատարած է խմբավար Ժիրայր Ալթունեանի ղեկավարութեամբ:

Երաժշտական թէ բովանդակութեան այլազանութեամբ տարբեր յերգեր մատչելի են չորսէն տասներկու տարեկան փոքրիկներու համար: Դպրոցի ու դպրոցական, կենդանական աշխարհին, տարուան եղանակներուն եւ բնութեան երեւոյթներուն ու ստեղծութեան նուիրուած անոնց ոտանաւորներն ու երաժշտական լեզուն, մատչելի, ջերմ եւ հաղորդակ են: Անոնցմէ մտքուր հնչեցնողով ու գրաւիչ կերպով երգուած մանկապատանեկան երգչախումբին շուրջ երեք տասնեակ անդամներուն կողմէ:

Միրվարդ Գարամանուկի այս խոսաստիկին երգերէն շատեր, պակաս թիւով սիրելի պիտի ըլլան հայրենի եւ յատուկ սիրելի մանուկներուն եւ պատանիներուն, որոնք հոն պիտի գտնեն իրենց կեանքը հանելի դարձնող շոր երգացանկ մը, որ այսուհետեւ իր տեղը պիտի ունենայ մանկապատանեկան երգարուեստի ասպարէզին մէջ:

Չ. Բ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայկական Յեղասպանութեան հերթական տարեդարձին առիթով Միացեալ Նահանգներու հայկական կազմակերպութիւնները աշխուժ եւ հետեւողական աշխատանք ծաւալած են Քոնկրէսի եւ Միացեալ Նահանգներու վարչակազմին հետ, եւ արդէն 164 քուկրէսական դիմած է նախագահ Պուշին՝ 24 Ապրիլի իր խօսքին մէջ «Յեղասպանութիւն» բառը օգտագործելու կոչով:

Կը թուի, թէ պահը շատ յարմար եւ նպատակաւոր է՝ տարիներ շարունակ ձգձուող այս խնդիրը տեղէն շարժելու եւ Միացեալ Նահանգներու կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման հասնելու համար: Յիշեցնենք, որ իրաքի պատերազմին նկատմամբ թուրքիոյ վերապահ վերաբերմունքը չէզոքացնելու համար վերջերս ամերիկեան վարչակազմը ինքն ալ ակնարկեց Ուաշինկթըն այցելած թուրք նախարարներուն՝ այսպիսի կարելիութեան մը գոյութեան մասին: Յայտնի է նաեւ, որ հակառակ այդ սպանալիքին, պատերազմի ամբողջ ընթացքին թուրքիա մինչեւ վերջ հաւատարիմ մնաց իր որդեգրած քաղաքականութեան, եւ միայն Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փոստըլի դրսեւորած դիւանագիտական համոզութիւնը կարելիութեան տուաւ գտնել ամերիկեան վարչակազմի համար ժամանակաւոր ու խիստ փխրուն համաձայնութիւն մը իրաքի եւ մասնաւորապէս՝ քրտական ինքնավարութեան հարցին մէջ:

Բայց ստեղծուած փխրուն հաւասարակշռութիւնը շատ շուտով կրնայ խախտուիլ, եթէ իրաքի պատերազմին մէջ ձեռք բերուած յաղողութիւններէն ներկայիս ակնյայտօրէն գլխապտոյտ պարող Միացեալ Նահանգները ձեռնարկեն նոր քայլեր՝ շրջանի ալ երկիրներու նկատմամբ: Այսպիսի պարագայի մը թուրքիոյ լարակալութեան կարելիութիւնները պիտի սահմանափակուին, եւ ան ի վերջոյ ստիպուած պիտի ըլլայ կատարել ճակատագրական ընտրու-

թիւն՝ Միացեալ Նահանգներու անվերապահ արքանեակի կամ անոր հակառակորդի դերերուն միջեւ:

Այսպիսի զարգացումներու որեւէ տարբերակի մէջ անխուսափելի կը դառնայ թուրք-քրտական եւ հայ-թրքական յարաբերութիւններու ամբողջ թնտնակին «թարմացումը»: Պատճառը ակնյայտ է. նոյնիսկ Միացեալ Նահանգներու ամէնէն անվերապահ արքանեակը դառնալու պարագային թուրքիա ստիպուած պիտի ըլլայ լրջօրէն վերանայիլ իր յարաբերութիւնները քրտներուն, որոնց շարքին նաեւ Հայաստանի, ինչպէս նաեւ իր երկրին մէջ գտնուող բազմամիլիոն քրտ ժողովուրդին նկատմամբ:

Ուրեմն, անկախ այն իրողութենէն, թէ թուրքիա պիտի դառնայ Միացեալ Նահանգներու արեւելիկ «բարեկամ» մը, թէ կատարի հակառակորդը, շրջանին մէջ Միացեալ Նահանգներու հաստատման պարագային Հայկական Յեղասպանութիւնը պիտի ճանչցուի իրեն Հայաստան-թուրքիա քաղաքական հակադրութեան հաստատման գործոց մեքանիզմ: Սակայն տուեալ եռանկիւնաձեւ համակարգը ալ աւելի մօտիկ հեռանկարին մէջ անխուսափելի կը դարձնէ նաեւ թուրքիա - ինքնավար Բիւրսիստան հակադրութեան ձեւաւորումը Միացեալ Նահանգներու կողմէ: Ասոր շրջագիծին մէջ պիտի դիտարկուի թուրքիոյ շուրջ 12 միլիոն հաշուող քրտներու իրաւունքներուն հարցը, որովհետեւ կարելի չէ մտածել մերձաւոր եւ միջին արեւելեան ամբողջ շրջանին մէջ ժողովրդավարութեան հաստատման մասին՝ չլուծելով քրտական հարցը:

Ասիկա կը հասկնան Միացեալ Նահանգները, Եւրոպական Միութիւնը, ինչպէս նաեւ՝ արդէն պայթարի ժողովրդավարական մեթոտներուն անցնող քրտական շարժման ղեկավարները: Խնդիրներու այս շրջագիծին մէջ անխուսափելի է նաեւ որոշակի հակասութիւններու դաշտի մը ձեւաւորումը Հայկական Յեղասպանութեան ճանաչման եւ քրտներու ինքնորոշման ձգտումներուն միջեւ, որովհետեւ այսօրուրէն արդէն ամբողջ աշխարհին մէջ տարածուող ապագայ Բիւրսիստանի քարտէսները կ'ընդգրկեն նաեւ ամբողջ Արեւմտեան Հայաստանը, այսինքն՝ այն տարածքը, ուր տեղի ունեցած է Հայկական Յեղասպանութիւնը:

Այսպիսով, Մերձաւոր եւ Միջին Արեւելքի մէջ ժողովրդավարութեան հաստատման, Հայկական Յեղասպանութեան ճանաչման եւ քրտ ժողովուրդի ինքնորոշման խնդիրները միահիւստելով իրարու եւ միեւնոյն ժամանակ՝ հակասութեան մէջ մտնելով մէկը միւսին հետ, կը դառնան շրջան մուգ գործող Միացեալ Նահանգներու առջեւ դրուած մեծագոյն գլուխկոտրուկը:

Այսպիսի պայմաններու մէջ քանի դեռ Միացեալ Նահանգները ամբողջն չեն հաստատուած ամբողջ շրջանին մէջ, անոնք պիտի փորձեն այդ թնտնակը օգտագործել իրեն թուրքիան հնազանդեցընելու գործուն մեքանիզմով: Ուստի, ներկայ հանգրուանին դժուար է կարողել քայլեր սպասել Միացեալ Նահանգներու վարչակազմէն: Այսօր մեզի համար կարեւոր է ոչ այնքան Միացեալ Նահանգներու կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման հարցին արագ լուծումը, որքան՝ այդ խնդրի ամբողջական ներառումը շրջանին շուրջ ընթացող ընդհանուր բանալիէն մէջ, միեւնոյն ժամանակ, ոչ թէ պարզապէս իրեն պատմական յիշողութեան վերաթարմացում, այլ՝ քաղաքական խնդիր, այսինքն՝ ներկայիս ալ իր գոյութեան մասին ազդարարող ժողովուրդին՝ արեւմտահայերու իրաւունքներու վերականգնման խնդիր:

Այս շրջագիծին մէջ իր իրաւունքներուն վերականգնման համար պայթարող քրտ ժողովուրդը պարտաւոր է առաջինը ճանչնալ եւ ընդունել Հայկական Յեղասպանութեան իրողութիւնը:

ՍԱՐԳԻՍ ԳԵՐԳԵԱՆ

«Հայոց Աշխարհ» (Արեւմտահայերէնի վերածուած)

www.aztagdaily.com

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ
ԱՒԱԳ ՇԱԲԹՈՒՄՆ ԵՒ Ս. ԶԱՏԿՈՒՄՆ
ԱՆԹԻԼՈՒՍԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. վեհափառ Հայրապետի նախագահութեամբ, Անթիլիասի Մայր տաճարին մէջ Աւագ Շաբթուան յատուկ եկեղեցական արարողութիւնները պիտի կատարուին հետեւեալ ժամանակացոյցով.

ԺԱՄԱՐ	ԺԱՄԱՐ
ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ - Կարգ նշելութեան	9:00ին
18 Ապրիլ - Կարգ Թաղման	4:00ին
ԱՒԱԳ ՇԱԲԹ - Առաւօտ	8:00ին
19 Ապրիլ - Ժրգալոյցի պատարագ	4:00ին
Ս. ԶԱՏԻԿ - Ժամերգութիւն	8:00ին
20 Ապրիլ - Ս. պատարագ	10:00ին
ՄԵՆԵԼՈՅ - Ժամերգութիւն	8:00ին
21 Ապրիլ - Ս. պատարագ	9:00ին

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդի գաւազները, ներկայ գտնուելու հոգեպարար արարողութեանց եւ վերանորոգուելու քրիստոնէական հաւատքով ու աւանդութիւններով:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԱՒԱԳ ՇԱԲԹՈՒՄՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ

● **ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ, 18 ԱՊՐԻԼ 2003**
ՅԻՃԱՍԿ ԽԱԶԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԹԱՂԱՍԱՆ
- ԹԱՂԱՍԱՆ ԿԱՐԳ՝ կէսօրէ ետք ժամը 4:30ին
Կը հանդիսապետել եւ կը քարոզէ
ՇՈՐՁ. Տ. ԳՐԻԳՈՐ ՎՐԳ. ԶԻՖՃԵԱՆ

● **ԱՒԱԳ ՇԱԲԹ, 19 ԱՊՐԻԼ 2003**
ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ
- Առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 8:00ին
Ժամերգութեան ակարտիս. Շաղորդութիւն
- Երկույեան ժամերգութիւն եւ ընթերցումներու ընթերցում ժամը 4:00ին
- ՃՐԱԳԱԼՈՅՑԻ Ս. Պատարագ՝ երկույեան ժամը 5:00ին

● **ԿԵՐԱՎԻ, 20 ԱՊՐԻԼ 2003. Ս. ԶԱՏԻԿ**
ՅԻՃԱՍԿ ՄԵՐ ՏԻՐՈՅ ՅԻՍՒՄԻ ԶԻՍՏՈՍԻ
ՇՐԱՄՈՒՄՈՒ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ
- Ժամերգութիւն՝ առաւօտեան ժամը 7:30ին
- Ս. Պատարագ՝ ժամը 9:30ին
Կը պատարագէ եւ կը քարոզէ
ԳԵՐՁ. Տ. ԶԱՐԵՆ ԱՐԵ. ԱԶՆԱԻՐԵԱՆ

● **ԵՐԿՈՒՇԱԲԹ, 21 ԱՊՐԻԼ 2003**
ՅԻՃԱՍԿ ՄԵՆԵԼՈՅ
- Ս. Պատարագ՝ ժամը 8:00ին
- Ֆերմ Շրպալի Ազգային գերեզմանատան Ս. Պատարագ, ժամը 10:30ին
- Հաւաքական գերեզմանօրհնէ՝ ժամը 11:30ին

● Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու եւ հաղորդուելու վերոյիշեալ սրբազան արարողութեանց:
ԹԱՂԱՍԱՆ ԽՈՐՈՒՐԴ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ



7րդ Արտուեստ

ԻՏԱԼԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇԱԲԱԹԸ՝ ԻՊԱՏԻ ԿԻՆ ԲԵՄԱԳՐԻՉՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐՈՒՆ

Նոր Ժապաւեններ

■ «ՅԱՐ ՅՐԱՄ ՀԵԻՆ»
Բեմադրիչ՝ ԹԱՏՏ ՀԵՅՆԸ



«Տոննիք»



Նման տողին կրկնուող փորձերուն:

Իրարու հետ պարագայական կապ ունեցող երկու անհատներու տրաման պատկերող ժապաւեն մըն է «Տոննիք»-ը: Ուշիմա Լապալիէի բեմադրած այս ժապաւենը աստիճանաբար կը մերկացնէ իր երկու զլխաւոր հերոսներուն՝ գաղտնի ոստիկան Արիստի և պատանութեան սեմին գտնուող աղջնակի մը՝ Տոննիքայի հոգիները, բացայայտելով արտաքին կարծր պատեանին տակ պահուած անոնց ողբերգութիւնները: Ժապաւենին ղեկավարը տեղի կ'ունենան մէկ օրուան ընթացքին, երբ ան Նափոլիի փողոցներուն մէջ շրջելով, կը փորձէ համոզել աղջնա-

մուկի վերածուած շատախօսութեամբ: «Սուտ սայտ սթորի» կը ներկայացնէ իտալական ուսման տարող նիկերացի պոռնիկներու խումբի մը և անոնց նկատմամբ մերժողական կեցուածք որդեգրող իտալացի կիններու միջև զարգացող բախումը: Այս լարուածութիւնը բացայայտող պատճառն է նիկերացի գեղեցիկուհի Ռոմէայի և իտալացի երիտասարդ ձիուկի թիթի սիրոյ պատմութիւնը, որ իր տարօրինակ կերպով ներկայացուած ըլլալով հանդերձ, հետաւոր կապ մը ենթադրել կու տայ «Ռոմէո և Ջիւլիէթ»ի հետ, սակայն արական և իգական շրջուած դերերով (պատշաճմին վրայէն իր

Ընտանեկան ու ընկերային այս տրամային դեպքերը կը պատահին յիսուական քուականցներուն: Քեթի (Ճիլիէն Մուր) և Ֆրէնք (Տեհիս Քուէյտ) իտեալ գոյցի մը բոլոր տուեալները ունին և կ'ապրին իտալական կեանք մը, մինչև այն օրը, երբ Քեթի կը յայտնաբերէ իր ամուսինի միասեռական հակումները: Երեւոյթներու կարեւորութիւն տուող միջավայրի մը մէջ հերոսներին կեանքը շատ հեռու կը դառնայ երկնային ըլլալէ, մանաւանդ երբ ան կը մտերմանայ իր սեռամորթ պարտիգայանի՝ Ռեյմոնտի (Տեհիս Հէյսպըրթ) հետ: Նշենք, որ այս ժապաւենին մէջ հոյակապ խղարկութեամբ հանդէս կու գայ ձիւլիէն Մուր, որ իր այս դերին համար թեկնածու ներկայացուած էր լաւագոյն դերասանուհիի «Օսքար»-ին:

■ «ՃՈՆԻ ԻՆԿԼԻՇ»
Բեմադրիչ՝ ՓԻԹԸՐ ՀՈՒՌԻԹ

Յանձնաժողովը կ'ընկալուի անգլիացի նոր լրտեսի մը ծագումը ծանուցող այս ժապաւենը անուշաբան չափով կ'օգտուի «Մըսթըր Պիլ»-ի խեղճապատկերով շնորհներէն: Վախի և վտանգի անձանք այս հերոսը նոյնքան անձանք է լրտեսի մը համար եական գիտելիքներու: Ճոնի Ինկլիշ այս ժապաւենին մէջ պիտի փորձէ առանձին փոստիկան արտադրող ամբողջ երկիրը:

■ «ՔՐԵՏԸԼ ԹՈՒ ՏԸ ԿՐԵՅՎ»
Բեմադրիչ՝ ԱՆՏՐԵՅ ՊԱՐԹՐՈՒՄԸ

Գոհարեղէնի գող մը (Ճէթ Լի) կատարելէ ետք նշանաւոր սեւ աղամանդէ գոհարեղէններու գողութիւնը, իր աղջիկը առեւանգուած կը գտնէ: Էջըն այս ժապաւենը հարուստ է կուրներու տեսարաններով:

■ «ԹԱՆՏԵՐՓԵՆԹՅՑ»
Բեմադրիչ՝ ՓԻԹԸՐ ՀՈՒՌԻԹ

Մանուկներու յատուկ այս ժապաւենը կը ներկայացնէ հովուներ վրայ ազդեցութիւն բացեցնելու կարողութեամբ օժտուած տասնմեկ տարեկան տղայ մը: Ան բազմաթիւ արկածախնդրութիւններ ունենալէ եւ հոչակի հասցելէ ետք, վերջապէս կ'իրականացնէ աստղագետի դառնալու իր երազը:

Պատրաստեց՝ Պ. ՓԱՆՈՍԵԱՆ

ԵՐԻՍՏՈՒԹԱՂԱՍԱՆ ԹԱՓՈՐ

Աւագ Ուրբաթ, 18 Ապրիլ 2003ին, մեր Տիրոջ Յիսուսի Զրիստոսի չարաբանաց խաչելութեան ու թաղման Յիշատակին սրբազան արարողութիւնը պիտի կատարուի Նոր Մարաշի Ս. Զառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ:

Այս առթիւ յետ արարողութեան թաղման հանդիսաւոր թափօր պիտի կատարուի, մասնակցութեամբ Զահանայից դասուն, Դարբաց Դասուն եւ ժողովուրդին:

Եկեղեցական արարողութեան եւ թափօրին պիտի հանդիսապետուի քարոզիչ՝

ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

(Բարեգան Առաջնորդ Լիբանանի Դպրոց)

Ժամերգութիւն Թափօր Ժամը 4:30ին Ժամը 5:15ին

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի բոլոր գաւազներուն՝ մասնակցից դառնալու թաղման արարողութեան ու զօրանալու մահով Յարութիւն կերտած Զրիստոսի խաչով:

Ս. ԸՆՈՍԱՆԻՑ ՍԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՉ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

www.hamazkayin.com

Անցնող տարուան ընթացքին լիբանանեան շարժապատկերի կեանքը հարստացնող երեւոյթներն էին արդէն իսկ անանուութիւն դարձած օտար երկիրներու շարժապատկերի փառաստաններն ու շարժանկարները: Անոնք մշակութային այլազանութեան առիթներ տուին լիբանանեան շարժապատկերի սրահները յորդեցնող հոլիվուտեան ժապաւեններու միօրինակութենէն յոգնած հանդիսատեսներուն: Այս իրադրութիւններէն նշենք Եւրոպական շարժապատկերի փառաստանը, «Պէլլուսթ Ֆիլմ Ֆեսթիվալը», սպասախօս երկիրներու շարժապատկերի շարժաթ, ինչպէս նաեւ՝ զանազան դեպքանատուներու և մշակութային կեդրոններու կողմէ կազմակերպուած այլ երկիրներու շարժապատկերի շարժանկարները:

Այս բոլորին մէջ յաւելորդաբար երկրորդ տա-



«Լիպերաթէ Ի փեշի»-էն տեսարան մը

րին ըլլալով իր տեղը ունի իտալական շարժապատկերի շարժաթ կազմակերպուած Իտալական Մշակութային կեդրոնին ու Լիբանանի մէջ իտալական դեսպանատան կողմէ: 11-16 Ապրիլին, «Ամփիլ» (Սոֆիլ) սրահին մէջ Լիբանանի մէջ առաջին անգամ ցուցադրուող իտալական հինգ ժապաւեններ մատուցած այս փառաստանը կը կրէր «Արեւմտ օ Ֆեմինին» խո-

ստանդ շարժուան ընթացքին ներկայացուած ժապաւենները առաջին անգամն էր, որ կը ցուցադրուէին լիբա-

ԺԱՊԱՒԵՆՆԵՐ - ԿԱՐԾԻՔ

- «ՅԱՐ ՅՐԱՄ ՀԵՎԸՆ», (Ամփիլ / Սոֆիլ)
- «ԸՆԵՅՏԸԼ ԹՈՒՏԸ ԿՐԵՅՎ» (Ամփիլ / Տիւն, Եսփաս, Սեմ Էլի, Սոտեթ, Սքալլու 2001, Լաւ Սալիմաս, Կալաքսի)
- «ՃՈՆԻ ԻՆԿԼԻՇ» (Ամփիլ / Սոֆիլ, Փլաւնթ / Ֆրիուէ, Զալիթ, Ապրաթ)
- «ԹԱՆՏԵՐՓԵՆԹՅՑ» (Ամփիլ / Եսփաս, Սեմ Էլի, Սոտեթ, Կալաքսի)
- «ԹՈՒ ՌԻԻԵՂ ՆՈՒԹՍ» (Ամփիլ / Տիւն, Եսփաս, Սեմ Էլի, Սոտեթ, Սքալլու 2001, Լաւ Սալիմաս, Կալաքսի)
- «ՏԸ ԸՈՐ» (Փլաւնթ/Ապրաթ, Չուք, Ֆրիուէ, Թրիփոլի)
- «ՏԸ ՌԻԵՐՈՒԻԹ» (Փլաւնթ/Ապրաթ, Չուք, Ընցըրոտ, Ֆրիուէ, Թրիփոլի)
- «ՖՐԻՍԱ» (Փլաւնթ/Ապրաթ, Չուք, Ընցըրոտ, Ֆրիուէ)
- «ՏԵՐԵՎԸԼ» (Ամփիլ/Տիւն, Եսփաս, Սոտեթ, Սքալլու 2001, Կալաքսի)
- «ՍԻՍՈՆ» (Ամփիլ, Սոտեթ, Լաւ Սալիմաս)
- «ՍԱՍՈՒՐԱՅՁ» (Փլաւնթ/Ապրաթ, Թրիփոլի, Չուք)
- «ՏԸ ԱՌԻԲՁ» (Փլաւնթ/ Ապրաթ, Զալիթ, Ընցըրոտ)
- «ԸՊԱՌԻԹ ՉՍԻԹ» (Ամփիլ/ Տիւն, Սոտեթ)
- «ՏԱՌ ՉԻԵ» (Փլաւնթ/Ընցըրոտ)
- «ՄԵՅՏ ԻՆ ՄԵՆԵԿԵԹԸՆ» (Ամփիլ/Տիւն)
- «ԵՆՏԸԼԱՅՁ ՏԵԹ» (Ամփիլ, Եսփաս, Սոտեթ, Սքալլու 2001, Կալաքսի, Սքարկէյթ)
- «ԵԱԼԼԱ ԵԱԼԼԱ» (Ամփիլ/ Սքալլու 2001)
- «ՇԻԲԱԿՕ» (Փլաւնթ/Ապրաթ, Ընցըրոտ, Ֆրիուէ, Թրիփոլի, Սքարկէյթ)
- «ԵՆՏԸԼԱ ՄԵԵԻՐԻԹ» (Ամփիլ)
- «ՏԸ ԼՈՐՏ ԱՅ ՏԸ ՌԻԿԱՅ» (Փլաւնթ/Ընցըրոտ, Ամպաստ)
- «ՏԸ ԸՈՒՅԵԹ ԵՄԵՐԻԵԸՆ» (Փլաւնթ/Ընցըրոտ, Ապրաթ)
- «ՇԱԿԱՅՆ ՆԱՅԹ» (Փլաւնթ, Չուք)
- «ԸԵՉ ՍԻ ԻՅ ԵՆՐ ԸԵՆ» (Փլաւնթ/Ընցըրոտ, Ֆրիուէ)

●●●● Գերազանց ●●●● Չառ լաւ ●●●● Լաւ ●●●● Սիքալի ●●●● Զենք յանձնարարող ●●●● Զենք դիտած

ԸՄԱԹԱՊԱՏԿԵՐԻ ՍՐԱՂՆԵՐՈՒՆ ԶԵՆԱՅՆՆԵՐԻ ԹԻԻԵՐԸ
Էսփաս-09/212516 - Սոտեթ-01/616707 - Տիւն-01/792123 - Սոֆիլ-01/328806 -
Քնցըրոտ-01/738439 - Ամպաստ-09/226010
Ֆրիուէ-01/485590 - Ապրաթ-01/292192 - Քալիթ-09/912503 - Չուք-09/221363 -
Սքարկէյթ-08/813901 - Սեմ Էլի-04/443992, Թրիփոլի-06/442471:



«Մի սէյ անթրաթա նէլ բուրդը քոմ ան քուլիօ տի քուլթելլո»

կը, որպէսզի ան ստուգէ ինքնութիւնը տարի մը առաջ զինք բռնաբարող ոճրագործին դիակին: Նափոլիի փողոցներուն մէջ անոնց օրը կը վերածնունդը և որդեկորութեան մը, որ իրարու կը մօտեցնէ ծնողական գուրգուրանքէ զուրկ աղջնակը և մահուան սեմին գտնուող հիւանդ ոստիկանը: Յետադարձ ակնարկներով հարուստ «Տոննիք» գեղեցիկ կերպով հանդիսատեսին դիմաց կը բանայ Նափոլիի մութ, շատ ժողովրդային փողոցներուն ծաղիկը և անոնց մէջ տեղի ունեցող ընկերային հետաքրքրական կապերը:

Դարձեալ իրարանցումի միջնորդ մը ստեղծող և սեւ երգիծանքով հարուստ ժապաւեն մըն է «Ռոզէ Ի փիսթոլէ» (բեմադրիչ՝ Գարլա Ափուրզօ), որուն ղեկավարը դարձեալ տեղի կ'ունենան Նափոլիի մէջ, ուր երկու երիտասարդ հեռուստիւնի Ռոզա և Անճելո, կը փախչին Ռոզայի նախանձոտ ամուսինէն: Մէկէ անց նիւթեր կը միախառնուին այս մէկուհի ի վերջոյ յանգրու համար ուրախ աւարտի մը:

Կեդրոնական շատ թույլ առանցք ունեցող ժապաւեններ են «Սուտ սայտ սթորի» («Հարաւանային կողմի պատմութիւն») և «Ռոզէ Ի փիսթոլէ» («Վարդեր և ատրճանակներ») ժապաւենները: Առաջինը, բեմադրութեամբ Ռոզայի թատրոնի, տարօրինակ խառնուրդ մըն է վաւերագրականի ու երեւակայականի սեւերուն և խճողուած է նիկերիական ու իտալական այլազան բարբառներու աղ-

իտալական ժապաւեններու շարժուան ընթացքին ներկայացուած ժապաւենները, հակառակ իրենց քիչ թիւին մէջ ներառուած մէկ երկու խնդրայարոյց ժապաւեններուն, կը ներկայանան իրեն առիթ՝ ծանօթանալու իտալական ժապաւենական կից շարժապատկերի կարգ մը գործերուն:

Ռուսկապիան Մեծարանի Մեծարանի ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

ԱՅՍ ՕՐԵՐՈՒՆ ԲՈՒՏԱՆԻՈՅ ՄԵՋ ԿԸ ՍԿՍԻ ՑՈՒՑԱՂՈՒԻԻԼ «ԱՐԱՐԱՏ»Ը, ՈՐՈՒՆ ԲԱՑՍԱՆ ԽՕՍԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԵ ՆՈՒՐԻՉԱՆ ՄԱՅՈՒՍԵԱՆ: ԱՅՍ ԱՌԻՈՎ ԱՆ «ՏԸ ԿԱՐՏԻԸՆ» ԹԵՐԹԻՆ ՄԵՋ ԿԸ ՊԱՏՄԵ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐԾԻԼ ԿՈՐԵԻԻ ԻՐ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ «ՊԼԵԷ ԵՅՆՃԸԼ» ԱՅՆՔԱՆ ՏՊԱԿՈՐԸ Ե ԱՌՈՒ ԵԿՈՅԵԱՆԸ, ՈՐ ԱՆ ՈՐՈՇԱԾ Ե ԶԱՅՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԻՐ ԺԱՊԱԿԵՆԻՆ ՄԵՋ ԵՒ ԶԻՆՔ ՎԵՐԱԾԵԼ ՏԻՊԱՐԻ ՄԸ: ՅՕՂՈՒԱՏԵՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՐԳԱԶՐՈՅՆԵՐՈՒ ՄԵՋ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ԱՆՏԵՍՈՒԱԾ ԱՅՍ ԻՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՐԺԱՆԻ Ե ՈՒՇԱՂՈՒԹԵԱՆ

«Իբրև պատանի վանի հերոսամարտին մասնակցելով՝ Արշիլ Կորբի ականատես եղած է Հայոց պատմության ամենին գիցցազնական վայրկեաններուն: Սակայն յալորդ ամիսներուն եւ տարիներուն ան պիտի ապրէր իր ծննդավայրին, իր ժողովուրդին եւ ամենին ցնցելը՝ իր սիրեցեալ մօր կորուստը»:

Յաճախ գիրքիս այս տողերը կարդացած եմ հրապարակային ընթերցողներու առիթով, սակայն այլևս զանոնք մատուցող հեղինակը ես չեմ: Դերասանուհի մը զիս փոխարինած է «Արարատ» անունով ժապատէնի մը մէջ, բեմադրութեամբ Աթով Էկոյեանի:

Արշիլ Կորբի կենսագրութեան հրապարակումէն քանի մը օր առաջ, 1988ի Նոյեմբերին, ձեռագիր հեռագրածնէն մը ստացայ Քանաւոյի «Էկո Յիլմ Արթը» ընկերութենէն: Անիկա կ'ըսէր. «Միւրիլի» Նուրիճա, շատ փորձեցի հետո կապուել, սակայն բախտը չուներայ: Պարզապէս կ'ուզէի թեք ըսել, թէ «Պլէք Եյն-Յըլը» չոյակապ գործ մըն է, եւ թէ՛ շատ հպարտ պէտք է զգաս այս յայտնագործութիւնը կատարած ըլլալուդ համար: Սիրով՝ Աթով»:

Այդ պահուն տեղագրին կը պատրաստուէի գիրքիս հրապարակումին: «Ռոյըլ Քալէճ աֆ Արթի» մէջ բեմական մենախօսութեամբ պիտի ներկայացնէի Արշիլ Կորբի կեանքը՝ իր սիրեցեալ չորս կիներուն դիտանկիւնէն: «Կորբի անէճքի» մը առասպելը կայ. այս գիրքը տարիներու ընթացքին բաւական սուղ արժած է ինծի եւ իմ դիմացս ստեղծած է խնջողոտներու շարք մը, զորս պիտի չցանկայի նոյնիսկ յոռեգոյն թշնամիիս:

Նախապէս հանդիպած էի Էկոյեանի: Բարեհամբոյր եւ հողորդական էր: Կորբի կեանքին ուսումնասիրութեան վերաբերող հարցումներ ուղղած էր: Հայերուն համար, ինչպէս նաեւ՝ ամբողջ աշխարհին, ամերիկահայ «անիծեալ արուեստագէտը» անբեւեակայի անեղծուած մըն էր: Ինչո՞ւ հայ մը պիտի հրաժարէր իր Մանուկ Ատոյեանի սուղինէն: Ինչո՞ւ

անձնասպան եղած էր ան: Հարցումները միշտ նոյնն են:

Բացատրեցի, թէ իբրև մանկամարդ աղջիկ՝ սիրահարած էի Կորբի, երբ առաջին անգամ տեսայ անոր նուիրուած ցուցահանդէս մը «Թէյթ» պատկերասրահին մէջ: Սիրտս թունդ ելաւ, երբ տեսայ մութ աչքերով անոր դիմանկարները եւ գոհարի նման վերացական գեղանկարները: Ապա յայտնաբերեցի, թէ այս վերացապաշտ մեծ արուեստագէտը հայ էր ինծի պէս, եւ թէ՛ անոր ընտանիքը տառապած էր Հայկական Յեղասպանութեան ընթացքին: Որոշեցի գիտնալ, թէ սարկա ինչ ազդեցութիւն գործած էր անոր զարմանալի գեղանկարներուն վրայ եւ ի վերջոյ՝ ինչ դեր ունեցած էր անոր անձնասպանութեան մէջ: Անոր կեանքը ունէր կենսագրութեան մը անհրաժեշտ բոլոր տուեալները: Կրնայի պեղել անոր խոցուած հայկական մանկութիւնը, արկածախնդրական փախուստը եւ նորարար արուեստը, որ զայն վերածած էր արդի շարժումի մը՝ Նիւ Եորքի դպրոցին վարպետին: Բարձրահասակ եւ վայելուչ, լեցուն կոպերով եւ հոգեթով աչքերով Կորբի յարափոփոխ էր եւ խորհրդաւոր: Որքա՞ն գաղտնիքներ կային լուծելիք եւ որքա՞ն յարակցութիւններ կարելի էր գտնել:

Գիշերօթիկի մը մէջ իբրև անգլիացի աշակերտուհի ծայրուած՝ խուսափած էի մեծ հայրերու եւ մեծ մայրերու ապրած ողբերգական պատմութիւններէն. սպանուած մանուկներ, բաժնուած ընտանիքներ, կորուստ տուներ եւ հողեր: Բոլոր նախնիներու կեանքը կ'արձագանգէր, երբ կը խորանայի մեր պատմութեան մէջ՝ զիրքս գրելու համար:

Ժապատէնիս առաջին տեսարաններուն մէջ Անի՝ հայ պատմագէտ մը, կը ներկայացնէ Արշիլ Կորբի իր կենսագրութիւնը: «Արուեստագէտը եւ իր մայրը գեղանկարը պարզապէս լուսանկարի մը վերարտադրութիւնը չէ՛: Կորբի մեծարանքը իր մօր պիտի ստանար սրբազան յատկանիշ մը: Այն իրողութիւնը, թէ ան վերապրած էր Հայկական Յեղասպանութենէն, կը բացատրէ անոր ոգեղէն ուժը: Կորբի իր մայրը մոռացութենէ փրկեց զայն՝ դիտանկարու դէպի մը վրայէն խլելով եւ կեանքի պատուանդանին վրայ բարձրացնելով», կ'ըսէ ան: Էկոյեան կ'արտացոլէր գիրքիս խորքը:

Ժապատէնիս մէջ բեմադրելի մը՝ Շարլ Ազնաւուրի դերակատարութեամբ, կախարչուած է վանի պաշարուած միմանակ Կորբի մանկութեան պատմութեամբ, զոր կը պատմէ Անի: Ան հարց կու տայ, թէ արդեօք կրնա՞յ օգտագործել անոր կենսագրութիւնը: Դեղին նշաններ կախուած էին գիրքէս, եւ իւրաքանչիւր

չիւր էլ ընդգծուած էր ու նշագրուած: Էկոյեան ինծի ըսաւ, թէ կարգ մը պարբերութիւններ արցունք խած էին իրմէ: Փորձած էր զայն ժապատէնի մը բնագիրին վերածել, սակայն պատմական ժապատէնները իր ոճը չէին:

Ինձմէ խնդրեց լսել իր պատմութիւնը. «Կին մը գիրք մը կը գրէ Արշիլ Կորբի մասին»: Օղին մէջ բուռնցքով շարժում մը ըրաւ եւ շարունակեց. «Եթէ որեւէ նմանութիւն կայ ըսել եւ Անիի միջեւ, խնդրեմ՝ ըսէ՛»: Գիրք գրելը մէկ բան է, ժապատէն պատրաստելը՝ ուրիշ: Վիճեցայ, թէ Կորբին պէտք է ինքն իր մէջ առանձին պատմութիւն մը ըլլայ: Անոր կեանքը իրապէս դիւցազնեզուցութիւն մըն էր եւ կը խտացնէր Հայկական Յեղասպանութիւնը ապրած գեղանկարչի մը բոլոր յատկանիշները:

Կորբի Ամերիկա գացած էր 16 տարեկանին եւ որոշած էր արուեստագէտ դառնալ: Իրեն համար գծել կը նշանակէր վերապրել քայքայուած մանկութենէ մը եւ կապը պահել իր կորուստ գործարանի հետ: Ոչ ոք անոր արուեստը ճիշդ ձեռով վերլուծած էր, որովհետեւ անոր ժառանգութիւնը ամբողջութեամբ անտեսուած էր: Կ'ուզէի, որ այսպիսի՝ ժապատէն մը պատրաստուէր: Սակայն Էկոյեան անդրադուրէի էր, իսկ եւ չէի կրնար արգելք ըլլալ մէկուսի մը, որ հայ էր ինծի պէս, եւ որուն արուեստին կը համարէի: Կարգացի բնագիրները եւ կարծիքները յայտնեցի:

Ի վերջոյ ժապատէնը պատրաստուեցաւ եւ սկսայ ե-նամակներ ստանալ: «Վեց ամիս եղաւ: Պարզապէս կ'ուզեմ քեզի տեղեակ պահել, թէ «Արարատ» Նկարահանում լաւ ընթացքի մէջ է: Գրեթէ աւարտած ենք խմբագրումը: Ատրե՛նալիքը գիտ կ'առաջնորդէ», կը գրէր Էկոյեան:

Անխուսափելիօրէն թուրքիոյ մէջ սկսաւ ժապատէնը ձախողելու արշաւ մը, ինչ որ մեծ ծանուցում մը եղաւ ժապատէնին համար: Անիկա աշխարհի տարածքին հրապարակուեցաւ մեծ յաղթանակով: Մոսկուայի մէջ հանդիսատեսներ յորդեցան կինոներէ, Հայաստանի մայրաքաղաք Երեւանը հոգեզմայած էր, Միացեալ Նահանգներու մէջ «Արարատը» «Հերի Փոթըր»էն ետք ամենէն աւելի ժողովրդականութիւն վայելաւ: Ժապատէնը եղաւ, իսկ Քանաւոյի մէջ անիկա բազմաթիւ մրցանակներու արժանացաւ: Կը մտածէի, թէ հակագրեցութիւնը ինչ պիտի ըլլար Բրիտանիոյ մէջ, որ ջերմ գագուսներ ունէր Էկոյեանի նկատմամբ, սակայն գաղջ տրամադրութիւններ՝ Հայկական Յեղասպանութեան: Արդեօք Էկոյ-



Աթով Էկոյեան, Նուրիճա Մարտեան Եւ Սիմոն Աբգարեան՝ Բաննի փառատօնին

եան ինչ կը զգար այժմ: Անցեալ շաբաթ այլ ե-նամակ մը ստացայ: «Կրնամ անկեղծօրէն ըսել, թէ գիրքը մեծապէս փրկարար դեր ունեցաւ: Անիկա Կորբի սակաւիստ ցայտուն պատկեր մը ոգեկոչեց, որ գրեցի, թէ կրնայի վերլուծուածներ կատարել եւ ենթադրութիւններ ընել: Բան մը, որուն իրաւունքը այսպէս պիտի չտայի ինծի: Գիրքը դիպուկ վաւերականութիւն մը ունէր եւ գագազանօրէն լայն դաշտ մը կը պարզէր ընթերցողին դիմաց:

Ամէն ոք գիտէ, թէ երբ հեղինակներ իրենց գիրքերը կը տեսնեն պատատուին վրայ, կը ցանկանան երբեք գրած չըլլալ զանոնք: Սակայն կախարհուեցայ, երբ Քաննի շաբաթապատկերի փառատօնին առաջին անգամ ըլլալով պատատուին վրայ տեսայ մութ աչքերով այն տիպարը, զոր իբրև Կորբի ներկայացած էի գիրքիս մէջ, եւ նոյնիսկ, երբ տեսայ ինքզինքս՝ իբրև Էկոյեանի մէկ տիպար: Ժապատէնին ցուցադրութեան աւարտին արդէն անդրադարձած էի, թէ հայոց պատմութեան մէջ 83 տարուան զսպուած թալու մը վերջ գտած էր: Իմ մեծ հայրերս եւ մեծ մայրերս անտուն, անզուակ եւ անժառանգ մնացած էին, նոյնպէս՝ Էկոյեանին մեծ հայրերն ու մեծ մայրերը: «Երբ այս վայրերը կը տեսնեմ, կ'ըսէ տիպարներէն մէկը՝ Բաֆֆի, 10րդ դարու եկեղեցիի մը առջեւ կանգնած, - Կ'անդրադառնամ, թէ որքա՞ն բան կորսնցուցած ենք: Ո՛չ միայն հողեր եւ կեանքեր, այլ նաեւ՝ գանոնք յիշելու որեւէ միջոց»:

Էկոյեան խորտակած էր 20րդ դարու ցեղասպանութեան թալուն: Բաւարար էր այն իրողութիւնը, թէ ան յաջողած էր զայն նկարել եւ պատատուին յանձնել: Սակայն ժապատէնը նաեւ հոգեբանական յանդուգն հետազոտութիւն մըն է եւ մոլորաբար մը՝ շարժապատկերի արուեստին մէջ: Ինչ կը վերաբերի ինծի, ուրախ եմ, որ դեր մը ունեցած եմ անոր մէջ:

«ԵՌԻՐ ՄԱՅ ՏԵՍԹԸՆԻ»

«ՏԻ ԱՌԱՆԱԹԱ ՃՈՆԱԸԸ ԵՆՏ ԶՈՆԱԹԻԹԻՇՆԸ» ԹԵՐԹԸ ԶԱՆՈՂՈՒԹԻՒՆ ԿՈՐԱԿԵ ՏԱՐԱԾԱՍԱՐՔԱՅԻՆ ԱՐՈՒԵՍԻ «ՏԵՍԹԸՆԻ» ԳՈՐԾԸ, ՈՐ ՆՈՒՐՈՒԱԾ Ե ՀԱՅԱԿԱՆ ՑԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՅՍ ՕՐԵՐՈՒՆ ԿԸ ՑՈՒՑԱՂՈՒԻԻ ԱՌԱՆԱԹԱՅԻ «ԶԱԼԵՃ ԱՖ ԱՐԾ ԿԵԼԸՐԻ»-ԻՆ ՄԵՋ: ԶԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՆԸ ԶԱԲԵՏ ՄԸ ԿԸ ԹՈՒԻ ԸԼԼԱԼ

Արուեստի մէջ, ինչպէս կեանքի, իրե-րը միշտ ծրագրուած ձեռով չեն ընթանար, թէ եւ միշտ կարելիութիւնը կայ տարբեր յաղողութիւն մը քաղելու հաւանական ձախողութենէ մը: Ինչպէս սասցուածքը կ'ըսէ, եթէ մեծ քանակութեամբ կիտրոն ունիս, միշտ կարելի է կիտրոնի օշարակ չի-նել:

Մելիք Օհանեան, որուն տարածասարքային արուեստի գործը կը ցուցադրուի «Աթլանթա քալէճ աֆ արթ կէլըրի»ին մէջ, իբրև մէկ մասը «Ֆրանսական վիճակներ» Աթլանթա կը ներկայացնէ ժամանակակից արուեստի գործեր Ֆրանսայէն՝ վերնագիրով ցուցահանդէսին, նման վիճակի մը մէջ է:

Մտայղացքի արուեստ (քոնսեփշուր արթ) կիրարկող Ֆրանսայի արուեստագէտը Հիւսիսային Ամերիկայի մէջ իր գործին առաջին ցուցադրութեան համար յղացած է հանելուկային գաղափար մը՝ աքորի, ճակատագիրի եւ պատմական յիշողութեան վերաբերեալ: Օհանեանի գաղափարը ծնուող առած է ընտանեկան պատմութենէ եւ կը նկարագրէ, թէ ինչպէս իր մեծ հայրերն ու մեծ մայրերը խոյս տալով Հայկական Յեղասպանութենէն՝ ունէին նաևով երեք տեղ երթալու կարելիութիւն եւ հասած են Ֆրանսա... ան նաեւ իր անունով ամերիկացի մը յայտնաբերած է եւ այս պատ-

մութիւնը օգտագործած է արուեստի իր գործին մէջ: Օհանեան կը յուսար այս անձին հանդիպել եւ անոր հետ գործակցելով՝ ստեղծել իր երեւակայական երկրորդ «ես»ը, որ պիտի գար Պուէնտո Ալրէսէն. ինչ երեք վայրերէն մէկը, որ ուղղուած է ին գաղթականները փոխադրող նաւերը:

Օհանեան իր ծրագրին վրայ սկսած է աշխատել Աթլանթայի ցուցահանդէսին բացումէն 3 շաբաթ առաջ, բաց միտքով եւ բազմաթիւ գաղափարներով: Սակայն ան անդառնալի սխալ մը գործած է: Երեւակայելով տրամաթիք պահ մը, որ պիտի ստեղծուէր, երբ հանդիպէ իր անունը կրող ամերիկացիին, Օհանեան նախընտրած է նախօրէ տեղեակ չպահել զայն իր այցելութեան, ինքնութեան կամ նպատակին մասին: Եւ զարմանալի չէ, որ երբ իբրև օտարական այցելած է ամերիկացիին տը-նը Լոնկ Ալլընի մէջ, ան մերժած է դուռը բանալ (արդեօք դուք պիտի բանալի՞ք): Կարծէք այս բոլորը չէր բաւեր, ոստիկանութիւնը կասկածելի նկատած է արուեստագէտը, հետապնդած է զայն քաղաքին մէջ եւ յանձնարարած է երեք չվերադառնալ:


Ցուցահանդէսին բացումէն միայն քանի մը շաբաթ առաջ Օհանեանի ծրագիրը արդէն քայքայուած էր: Ան փորձած է վերստին կազմակերպուել եւ որոշած է ինքնին պատահածը վերածել տարածասարքային արուեստի: Անմիջապէս գործի լծուած է, շարունակած է վիտեռներ պատրաստել՝ օգտագործելով Փարիզի, Նիւ Եորքի եւ Պուէնտո Ալրէսի փողոցներուն մէջ քշելու իր պահերը: Ծամբորդած է Շիքափո՝ վիտեռոյ արձանագրուելու համար հարցազրոյց մը՝ ծագումով հայ կենսաբանի մը հետ, որ իր մեծ հայրերուն եւ մեծ մայրերուն պէս խոյս տուած էր թուրքերէն եւ պիտի պատմէր այդ փորձառութեան մասին:

Օհանեան իր փորձառութիւնը արձանապատած է օրագրութեան մը մէջ: Պատմութեան դիպաշարը հետաքրքրական է եւ առիթ կու տայ թափանցելու արուեստագէտին մտածե-

լակերպին ու աշխատելու ձեւին մէջ: Աւելին. Օհանեան կ'օգտագործէ Իրաքի պատերազմին առթած սաստիկ լարուածութիւնը եւ ցոյց կու տայ, թէ անիկա որքան ծանր կը կշռէ իր մտածումներուն վրայ, եւ ինչպէս կ'առնչուի պատերազմի նկատմամբ իր գգացումներուն՝ իր անձնական պատմութեան պարունակին մէջ: Օհանեան կը նկարագրէ պատերազմին սկիզբը իր խղճին ապրած տագնապը, որ ի վերջոյ զինք կը մղէ կատարելու քաղաքական հաստատում մը. ան կը մերժէ Աթլանթա զալ անձնապէս ամբողջացը-նելու համար տարածասարքային իր գործը եւ միաժամանակ ներկայ ըլլալ բացման հանդիսութեան:

Ինչ որ կը տեսնեք, այս է. օրագրութիւնը բաժնուած է 11 տուփերու մէջ, որոնք կախուած են մութ պատկերասրահին պատերէն: Փողոցը նկարուած վիտեռները, որոնք լուսաբաժակուած են պատուանդներու վրայ, տարածութիւնը կը բաժնեն Փոլ Անբայի «Նու ար մայ տեքընը» թատերախաղերու շարքէն առնուած ձայնագրութեան գործիքի մը սնտուկին հետ: Ձայնագրուած հարցազրոյցը, մասամբ հայերէն, մեղմօրէն կը հնչէ անկիւն մը:

Կը թուի, թէ սարկա կիտրոնի օշարակ լաւ չափ մը չէ: Հարցը այն է, որ տարածասարքային այս գործին հիմնական փորձառութիւնը 11 տուփերու մէջ տեղադրուած գրութիւնները կարողանա՞ր չափով չի հետաքրքրեցր այցելուներուն մեծամասնութիւնը, որ պէսպիսի անոնք յօ-ժարին կատարել նման բուն քայլարշաւ մը: Մատուցուած ձեւը ինքնին չ'օգնէր հասկնալու նիւթին: Այլ նպատակութիւն մըն ալ այն է, թէ շատեր կ'էս ժամ պիտի չնստնան՝ սպասելով, որ Շիքափոյն կենսաբանը անգլերէն խօսէր հայերէնի փոխարէն: Ինծի համար



Բաժին մը Մելիք Օհանեանի տարածասարքային գործին

առեղծուած է, թէ օտար լեզուով հարցազրոյց մը ինչպէս կը սատարէ հասկնալու բան մը թուրքերու կողմէ գործուած Հայկական Յեղասպանութեան վերաբերեալ: Մեծ նպաստ չեն բերեր նաեւ սարսափելիօրէն անորակ վիտեռները, որոնք թերեւս միայն կ'ապացուցեն Օհանեանի ապարդիւն ճիգերը:


Ի վերջոյ արուեստագէտին քաղաքական կեցուածք մը յայտնելու ճիգը, ինչպէս պատկերասրահին տնօրէնուհին՝ Լիզա Ֆիլման կը նկարագրէ իրեն իր բացառականութեան ու-ժը, նոյնքան անխոհեմ է, որքան՝ իր անունը կրող ամերիկացիին իր մասին տեղեակ չպահելը, նախքան անոր տան սեմին յայտնուելը, կամ՝ ինքզինքն թոյլ տալը, որ Ամերիկայի մէջ իր առաջին գործին ցուցադրութեան համար պատրաստուի շատ կարճ ժամանակի մէջ: Արուեստագէտը իր ներկայութեամբ եւ ինքզինքը քաղաքակրթ շատ աւելի իմաստալից հաստատում մը կատարած պիտի ըլլար:

Օհանեանի իմացական ուղեորութիւնը հաւանաբար լաւ գրագէտի մը գործին կրնար վերածուիլ: Սակայն, ինչ որ կը ցուցադրէ ան, զրաւիչ չէ իբրև տարածասարքային արուեստ:

Պատրաստեց Լ. ԿՐԻՆՅԱՆ-ՄՐԱՊԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 24րդ եւ վերջին հանգրուանի բացման մրցումին, երէկ Թրիփոլիի Քաղաքապետարանի դաշտին վրայ Շապապ Թրիփոլի 3-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Ռասիւնկէն:

Այսօր նոյն դաշտին վրայ ժամը 4:00ին տեղի կ'ունենայ Ռիաու Ուալ Ատապ - Իսլահ Պրոմ Շիմալի մրցումը:

● Լիբանանի ֆուտբոլի Գ. դասակարգի ախոյեանութեան 3րդ հանգրուանի մրցումներուն, վաղը՝ Շաբաթ, Ալէյի Քաղաքապետարանի դաշտին վրայ Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ կը մրցի Սատր Սաֆա Պարուք խումբին դէմ: Մրցումը տեղի պիտի ունենայ կէսօրուան ժամը 12:30ին:

Նշենք, թէ առաջին երեք հանգրուաններուն յաջորդական երեք յաղթանակ արձանագրած Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի կապը իր կատարած վերջին երկու մրցումներուն կրեց երկու պարտութիւն:

ՖՈՒԹՊՈՒԼԻ ԵՐԻՏՐԱՍԱՐԴԱԿԱՆ ՄՈՆՏԻԱԸ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ

ՖիՖԱն երէկ յայտնեց, թէ յառաջիկայ Դեկտեմբերին, Արաբական Միացեալ Էմիրութիւններու մէջ տեղի պիտի ունենայ ֆուտբոլի աշխարհի երիտասարդներու ախոյեանութեան մրցաշարը, հակառակ անոր որ Միջին Արեւելքի մէջ ներկայիս կացութիւնը կը մնայ բաւական յարուած:

ՖիՖԱի նախագահ Սեյի Պէթթըր Բաս, որ 2002 տարուան ընթացքին ՖիՖԱին եկամուտը եղած է 80 միլիոն ամերիկեան տոյար: Սակայն ան իր խօսքը ակնարկելով ՖիՖԱի գործադիր յանձնախումբին, Բաս, որ անկիւս իր ծախսերը քիչ մը պէտք է կրճատէ. նկատի ունենալով, որ տարեկան 800 հազար ամերիկեան տոյարի կը հասնի:

Հ. Յ. Գ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ...

Շարունակուած Ա. Էջէն

Իբրեւ Երոսական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովին մէջ Յունաստանի պատմութեան ղեկավար, Պանկայոս Ռուստամեանի հետ քննարկած է այդ կապակցութեան մէջ երկու երկիրներու պատմութեան ներքին գործակցութեան պարագայն:

Մասնաւորապէս Պանկայոս եւ Ռուստամեան, որոնք երկուսն ալ անդամ են վեհաժողովի ընկերակցական համախմբումին, դիտել տուած են, որ համագործակցութիւնը առիթ պիտի տայ Հայաստանին աւելի եւս ամրապնդուիլ Երոսական բնտանիքին մէջ:

Նոյն օրը, ընկ. Արմէն Ռուստամեան երկու հանդիպում ունեցած է Յունաստանի ընդդիմադիր մեծագոյն կուսակցութեան՝ «Նոր Հանրապետութիւն» խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Կոպի Փապոյանի հետ: Հանդիպման ընթացքին քննարկուած են երկու կողմեր շահագրգռող հարցեր: Արմէն Ռուստամեան ներկայացուած է Հայաստանի ներկայ իրավիճակը եւ Հ. Յ. Գ. գործունէութեան հիմնական ուղղութիւնները:

Հ. Յ. Գ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչը այսօր հանդիպում պիտի ունենայ Յունաստանի խորհրդարանի նախագահին հետ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Գրական յանձնախումբի կազմակերպութեամբ՝

1915Ը՝ ԸԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՂԵՆԸ

Կը ներկայացնէ՝

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

●Գեղարուեստական յայտագիր

Երեքշաբթի, 22 Ապրիլ 2003ին, երեկոյեան ժամը 8:30ին, «Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Ս. Թովմասեան» սրահին մէջ:

ՇՐԱԽԵՐ

PHOTO NERSES
(Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ)

ՀԻՄՆԱԳԻՄԱՆ 25ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

36 photo ֆիլմի ցկարահանումը միայն 8,000 Լ. Ո.

(Kodak Royal քարտի վրայ տպուած եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ) ... ԵՒ ՍՍԱՅԷ ՆԱԵԻ

Լուսանկարի նոր ֆիլմ մը + ալպոմ մը + ցկարի INDEX մը

Կը ցկարենք փողերու լուսանկարներ ՉԱՏԿՈՒԱՆ յատուկ յարգարանքով

PHOTO NERSES: Պուրճ Համուտ, Զաղաքապետարանի փողոց «Սանթր ԱՐԻՆ»ի դիմաց: Ըն. 01 - 261858 եւ 01 - 255992

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՄԱՅՔԸԸ ՃՈՐՏԸՆԻ ՎԵՐՋԻՆ ՄՐՅՈՒՄԸ

Էն. Պի. Էյ.ի երէկուան մրցումներուն, Մայքըլ Ճորտըն երրորդ եւ վերջին անգամ ըլլալով վերջ մը դրաւ պասքէթպոլիստի իր ասպարէզին, երբ Ուաշինկթըն Ուիչըրտօի հետ կատարեց իր վերջին մրցումը՝ Ֆիլատելֆիայի մէջ, ուր 107-87 արդիւնքով պարտութիւն մը կրեց դաշտին տէրերէն՝ Սիքսթընսը:

Հակառակ անոր որ ան այս եւ անցեալ եղանակին փլէյօֆի մրցումներուն չմասնակցեցաւ, սակայն 19 տարուան (ներառեալ երկու անգամ ասպարէզը լքելը) պասքէթպոլիստի իր ասպարէզին ընթացքին կատարեց բաւական իրագործումներ:

Առաջին հերթին ան դարձաւ առաջին մարպիւր, որ 40 տարեկանին Էն. Պի. Էյ.ի մրցումի մը ընթացքին նշանակեց 40 կէտ (21 Փետրուար 2003ին):

13 անգամ Օլ-Սթարի մրցումներուն մասնակցելով ան նշանակեց 262 կէտ, այսպիսով գերապանցելով Քարմի Ապտիլ-ժապարի հաստատած մրցանիշը, որ 18 Օլ-Սթարի մրցումներուն նշանակած էր 251 կէտ:

Այս եղանակին իր կապմին կատարած բոլոր մրցումներուն ալ (82) դաշտ ներկայանալով, ան դարձաւ Էն. Պի. Էյ.ի երրորդ լուսանկար կոլսորըրը՝ 32,292 կէտով: Երէկուան մրցումին ան նշանակեց 15 կէտ:

Շորք մը այլ իրագործումներ ալ կատարած Ճորտըն, Շիքսօ Պուլկի հետ վեց անգամ շահած է Էն. Պի. Էյ.ի տիտղոսը (1991էն 1993 եւ 1996էն 1998): Ան հինգ անգամ տիրացած է Էն. Պի. Էյ.ի լուսագոյն մարպիկի տիտղոսին, իսկ տասը անգամ ալ հանդիսացած է Էն. Պի. Էյ.ի կոլսորըրը:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՈՐՈՒՄ ԱՅՏՏԱԿՐԻՄԵՐԸ

●**Ժամը 7:30**
«Աւագ շաբթուան խորհրդածութիւն»


●**Ժամը 8:45**
«Աստղեր»

●**Ժամը 11:00**
Շարքազոյց՝ դոկտ. ընկ. Վաչէ Նիրբէլեանի հետ. Շալկական Ցեղասպանութեան ճանաչման աշխատանքներուն մասին

●**Ժամը 12:00**
«Մարտի պահենք հայերէնը»
Ճահանդուխտ

●**Ժամը 3:00**
Արարեան յայտագիր. Շարքազոյց՝ Շոք. Փառն վրդ. Վարդանանի հետ. Գիւր՝ Աւագ շաբթը հայ եկեղեցւոյ մէջ.

●**Ժամը 8:00**
«Շարքամարտ»



Մայքըլ Ճորտընի վերջին մրցումը՝ Ֆիլատելֆիայի մէջ

Վստահաբար, որ երէկուան մրցումին նախընտրելի պիտի ըլլար անոր համար, որպէսզի Ուիչըրտօ ասպահովէ փլէյօֆին իր տոմար, կամ առնուազան անոր ասպարէզը վերջ գտնէ յաղթանակով մը, սակայն տատաղ մրցանիշը, որ 18 Օլ-Սթարի մրցումներուն նշանակած էր 251 կէտ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները

Պոսթըն Սեյթթըս - Տիւրքոյիթ Փիլթըն	99-92
Ինտիանա Փէյսըրզ - Նիւ Ճըրզի Նէյթ	90-83
Միլուոքի Պաքս - Օրլանտօ Մէճիք	93-87
Նիւ Օրլինզ - Աթլանթա Հոքս	92-77
Տալաս Մալթրիքս - Սան Անթոնիօ Սփըրզ	93-72
Մինեսոթա Վուլվզ - Մեմֆիս Կրիզլէզ	95-87
Ֆիլ. Սիքսթըրզ - Ուաշինկթըն Ուիչըրտօ	107-87
Քլիվլենտ Քաւալիքս - Թորոնթօ Ռեյթթըրզ	96-86
Հիուսթըն Ռոքեթզ - Տեյլըր Նակթէթ	89-84
Մաքրաճենթօ Քիւնկզ - Եուսթա Ճէզ	95-84
Սիէթլ Սուպըրսոնիքս - Ֆէօնիքս Սանզ	84-70
Լ. Ա. Քլիվլէրզ - Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզ	107-93
Լ. Ա. Լէյքըրզ - Կոլտըն Սթէյթ Ռոքիթըրզ	117-111

Ստորեւ՝ վերջնական դասաւորումը (աստղանիշ կրող խումբերը, իրենց մասնակցութիւնը պիտի բերեն փլէյօֆի մրցումներուն):

●ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆ (ԱՏԼԱՆՏԵԱՆ ԳՕՏԻ)	
Նիւ Ճըրզի Նէթ	49 33
Ֆիլատելֆիա Սիքսթըրզ *	48 34
Պոսթըն Սեյթթիքս	44 38
Օրլանտօ Մէճիք	42 40
Նիւ Եորք Նիք	37 45
Ուաշինկթըն Ուիչըրտօ	37 45
Մայքըլ Հիթ	25 57
(ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՕՏԻ)	
Տիւրքոյիթ Փիլթըն	50 32
Ինտիանա Փէյսըրզ *	48 34
Նիւ Օրլինզ	47 35
Միլուոքի Պաքս *	42 40
Աթլանթա Հոքս	35 47
Շիքսօ Պուլկ	30 52
Թորոնթօ Ռեյթթըրզ	24 58
Էլիվլէնտ Զաւալիքզ	17 65
●ԱՐԵՒԵՏԵԱՆ ՇՐՋԱՆ (ՄԻՋԱՐԵՒԵՏԵԱՆ ԳՕՏԻ)	
Սան Անթոնիօ Սփըրզ *	60 22
Տալաս Մալթրիքս *	60 22
Մինեսոթա Վուլվզ *	51 31
Եուսթա Ճէզ *	47 35
Հիուսթըն Ռոքեթթ	43 39
Մեմֆիս Կրիզլէզ	28 54
Տեյլըր Նակթէթ	17 65
(ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՕՏԻ)	
Սաքրամենթօ Էլիքզ *	59 23
Լոս Անջելըս Լէյքըրզ *	50 32
Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզ *	50 32
Ֆէօնիքս Սանզ	44 38
Սիէթլ Սուպըրսոնիքս	40 42
Կոլտըն Սթէյթ Ռոքիթըրզ	38 44
Լոս Անջելըս Էլիքըրզ	27 55

ՄԱՐՍԷՅ ԴՈՒՐՍ ՄՆԱՅ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔԷՆ

Ֆրանսայի ֆուտբոլի Լիկայի բաժակի մրցաշարին կիսաարտական հանգրուանին իր կատարած մրցումին, Մարսէյ 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Մոնաքոյէն, դուրս մնաց մրցաշարէն: Մրցումին «որք» կոլը նշանակեց Տասօ Փրսօ (48րդ), պարտութեան մատնելէ ետք Մարսէյի բերդապահ Վետրան Ռիւնիէն:

Մոնաքոյի բերդապահ Ֆլաիօ Բոմա իր բերդը փրկելով, յաջողեցաւ իր մարպիչին՝ Տիտիէ Տէշանի համար ապահովել ասարտականին իր տոմար, որ յառաջիկայ Մայիս 17ին կը ձևկատի Սոչոյի դէմ: Այս վերջինը, իր կարգին ապահովեց ասարտականին իր տոմար յետ երկարաձգման ընթացքին 3-2 արդիւնքով պարտութեան մատնելով Մէսը, որ մրցումը ասարտեց տասը մարպիկով:

Սոչոյի մարպիկ Փիեռ - Ալէն Ֆրօ կը տօնէր իր ծննդեան 23րդ տարեդարձը նշանակեց երկու կոլ (47րդ եւ 69րդ), մինչ Միլվէն Մոնսորո նշանակեց իր կապմին երրորդ եւ յաղթանակ կոլը՝ երկարաձգման ընթացքին (99րդ): Մէսի կոլերը նշանակեցին Փրոման (27րդ) եւ Մամաուու Նիանկ (87րդ):

Ա. ԷՍ. ՌՈՍԱ ԱՊԱՀՈԿԵՑ ԻՏԱԼԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔԻ ԱԽԱՐՏԱԿԱՆԻ ՏՈՍԱԸ

Իտալիոյ ֆուտբոլի բաժակի մրցաշարին կիսաարտական հանգրուանի դարձի մրցումներուն, Ա. Էս. Բոսա 1-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Լազիօ Բոման, ապահովեց ասարտական հանգրուանին իր տոմար, ուր կը ձևկատի Ա. Սէ. Միլանի դէմ՝ երրորդ րոմբի դրոշմէն: Տիտղոսին տիրացող խումբը յառաջիկայ եղանակին համար կ'ապահովէ Եու. Է. Էֆ. Ա.ի ֆուտբոլի մրցաշարին իր տոմար:

Երբին Լազիօ Բոմայի դաշտին վրայ 2-1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած Ա. Էս. Բոմա, դարձի մրցումին իր կոլը նշանակեց շնորհիւ՝ Վինչենչօ Մոնթելայի (56րդ): Ա. Էս. Բոմայի մարպիչ Ֆապիէ Ֆապիէլլօ ասարտականին իր դէմ պիտի ունենայ Ա. Սէ. Միլանի մարպիչ Քարլօ Մաչիթիի կապմը, որ մրցաշարէն դուրս ձգեց Փերուճիան, 2-1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելով (երբ 0-0): Եոն Տալ Փոմասըն (41րդ) եւ Ալեսանտրօ Նետթա (52րդ) նշանակեցին Ա. Սէ. Միլանի կոլերը, իսկ Անտրէա Քարապիոլօ՝ Փերուճիայի կոլը (83րդ):

ԳՈՒԼԻՆ ՓԱՌԸԸ ԿՐՆԱՅ ՍՈՒՐԻԱ ԱՅՑԵԼԵԼ...

Շարունակուած Ա. Էջէն

բաստամոտիփոխները, թէ Պաղտատ Դամասկոսի արգիլուած զենքեր դրկած է:

Մինչ այդ, ըստ քրիստոնեական «Տը Թայմզ» քերթից, ամերիկացի հրամանատարներ յայտնած են, թէ յատուկ առաքելութեան մը պիտի ձեռնարկեն Սուրիոյ մէջ Սատամ Հիւսէյնի ապստամբ մարտիչները:

Թէեւ իրաքեան տապալած վարչակարգին անդամներուն հետապնդման ձեռնարկած ուժերը հրահանգ ստացած են Սուրիոյ սահմանները յարգելու, բացառութիւն մը պիտի կատարուի Սատամի պարագային, ըսած է Քաթարի մէջ ամերիկեան զինուորական աղբիւր մը:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԻ ՄԷՋ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՍ ՍԸ՝ ԱՆՇԱՐԱՆԱԿԱՆ

Միւս կողմէ, Գերմանիոյ վարչապետ Կերհարտ Շրեյտըր երէկ հրապարակուած հարցազրոյցի մը մէջ անհաւանակած ճկատած է, որ Միջին Արեւելքի մէջ նոր պատերազմ մը ծայր տայ, հակառակ Մ. Նահանգներու կողմէ Սուրիոյ կատարուած հետեւողական զոյւշացումներուն:

(ԱՅՓ)

ԱՐԱԳ ՇԱՐԱԹԸ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Այսու կու գանք յայտնելու մեր բարեպաշտ հաւատացեալ ժողովուրդին, թէ Աւագ Շաբթուան արարողութիւնները պիտի կատարուին հանդիսաւոր կերպով հետեւեալ ժամանակացոյցով.

- Այսօր՝ Աւագ Ուրբաթ, կէսօրէ ետք ժամը 4:00ին կարգ թաղման մերոյ Յիսուսի Զրիստոսի Թափօրին պիտի նախագահէ եւ քարոզէ՝

ԳԵՐՇ. Ն. ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԻԵՄԷՉԵԱՆ

- Ս. Չատկուան տօնին առիթով պիտի պատարագէ եւ քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ԵՓՐԵՄ ԱՐՔ. ԹԱՊԱՔԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան ժամը 7:30ին
Սկիզբ պատարագի ժամը 10:00ին
Քարոզ ժամը 11:00ին

Սիրով կը հրաւիրուի մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու սոյն արարողութիւններուն:

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՆԱԿԱՆ ՆՈՐՈՒՐԴ

